ԱՄՆ ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ, ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՅՈՒՐՈ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԶԵԿՈՒՅՑ 2011Թ.

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

Հրապարակվել է 24 մայիսի, 2012թ.

ԱՄՓՈՓԻՉ ԱԿՆԱՐԿ

Ըստ սահմանադրության Հայաստանը երկրի ընտրովի ղեկավար և միապալատ օրենսդիր կառույց (Ազգային ժողով) ունեցող հանրապետություն է: 2008թ. զգալիորեն թերի անցած ընտրություններից հետո Սերժ Սարգսյանը դարձավ Նախագահ: Իշխող կոալիցիան, որը ղեկավարվում է Սարգսյանի Հանրապետական կուսակցության կողմից, շարունակում է գերակա դիրք գրավել քաղաքական համակարգում: Անվտանգության ուժերը հաշվետու են քաղաքացիական իշխանություններին:

Մարդու իրավունքների առավել նշանակալի խնդիրներն առնչվում են իրենց իշխանություններին փոխելու քաղաքացիների իրավունքի սահմանափակումներին, խոսքի և մամուլի ազատությանը և դատական համակարգի անկախությանը: Իշխանություններն ազատ են արձակել 2008թ. անվտանգության ուժերի ու 2008թ. նախագահական ընտրությունների արդյունքները վիճարկող ցուցարարների միջև բախումների հետ կապված դեռևս անազատության մեջ գտնվող ընդդիմության վերջին վեց անդամներին: Ապրիլի 28-ից իշխանությունները սկսել են թույլատրել ցույցերի ու ընդդիմության հանրահավաքների անցկացումը մայրաքաղաքի այն վայրերում, որտեղ նախկինում սահմանափակված էր նման միջոցառումների անցկացումը, և դրանք բոլորն անցել են առանց միջադեպերի, չնայած ժամանակ առ ժամանակ ցույցերին մասնակցելու համար Երևան եկող ցուցարարների համար խոչընդոտներ են ստեղծվել Երևան հասնելու հետ կապված: Լրատվամիջոցներում, մասնավորապես հեռուստատեսություններում, շարունակել է բացակայել քաղաքական բազմակարծություն ու օբյեկտիվ լրատվություն: Կառավարությունն ապաքրեականացրեց զրպարտությունն ու վիրավորանքը, բայց սահմանեց բարձր քաղաքացիական տույժեր, որոնք խրախուսել են լրագրողների ու լրատվամիջոցների կողմից ինքնագրաքննությունը: Անալոգայինից թվային հեռուստահեռարձակման անցնելու համար կիրառված գործընթացը հանգեցրեց լրատվամիջոցներում բազմակարծության նվազեցման: Դատարանները շարունակել են ենթարկվել քաղաքական ճնշման գործադիր ճյուղի կողմից և դատավորներն էլ գործել են դատական մշակույթի այնպիսի միջավայրում, երբ ակնկալվում է գրեթե բոլոր գործերով մեղադրյալի հանդեպ կայացնել մեղադրական դատավճիռ:

Տարվա ընթացքում զինված ուժերում ոչ մարտական պայմաններում գրանցվել են կասկածելի մահվան դեպքեր, և շարունակվել են կանոնակարգային հարաբերությունների խախտումները և վատ վերաբերմունքը զորակոչիկների հանդեպ սպաների և ծառայակից զինվորների կողմից, ինչպես նաև շարունակվել է պատասխանատվության ենթարկելու բացակայությունն այդպիսի արարքների համար: Շարունակվել են հնչել մեղադրանքներ տանջանքների ենթարկելու վերաբերյալ: Շատ բանտեր եղել են գերբնակեցված, անբավարար սանիտարահիգիենիկ պայմաններում և չի ապահովվել բանտարկյալների բուժսպասարկումը: Ըստ հաղորդումների ոստիկանությունը ձերբակալելիս և հարցաքննությունների ժամանակ ծեծի է ենթարկել քաղաքացիներին: Իշխանությունները շարունակել են քրեական հանցանքների մեջ կասկածվողներին ձերբակալել և բերման ենթարկել առանց ողջամիտ կասկածի, և կամայականորեն բերման ենթարկել անձանց իրենց ընդդիմադիր քաղաքական պատկանելության կամ քաղաքական գործունեության համար: Իշխանություններն ու օրենքները սահմանափակել են կրոնական ազատությունը որոշ խմբերի համար: Խնդրահարույց է մնացել կոռուպցիան, որի դեմ իշխանությունները սահմանափակ քայլեր են ձեռնարկում: Շարունակում էր խնդրահարույց մնալ ընտանեկան բռնությունը, սակայն այն հիմնականում չէր հաղորդվում իրավասու մարմիններին: Խնդիր էր հանդիսանում մարդկանց թրաֆիքինգը, սակայն իշխանությունները ձեռնարկել են դրա դեմ պայքարի միջոցներ: Խտրականության դրսևորումներ են եղել հաշմանդամների հանդեպ՝ կյանքի գրեթե բոլոր ոլորտներում: Լեսբուհի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր անձիք ենթարկվել են չարաշահումներ հասարակության կողմից և խտրականություն է դրսևորվել զինվորական ու քրեակատարողական իշխանությունների կողմից: Եղել են հաղորդումներ հարկադիր աշխատանքի վերաբերյալ: Սահմանափակվել են աշխատողների իրավունքները, և թույլ է եղել գործող աշխատանքային օրենսդրության կիրարկումը:

Թեպետ իշխանությունները ձեռնարկել են ինչ-որ քայլեր պատժելու չարաշահումներ թույլ տված անվտանգության ուժերի և այլ կառույցների պաշտոնյաներին, սակայն անվտանգության ուժերի որոշ անդամներ շարունակել են անպատժելիորեն թույլ տալ մարդու իրավունքների խախտումներ՝ գտնվելով քաղաքացիական ղեկավարության ենթակայության ներքո : 2008թ. մարտի հետընտրական բռնությունների ժամանակ սպանված ութ քաղաքացիական անձանց և երկու ոստիկանների մահվան վերաբերյալ իշխանությունների ներկայացրած զեկույցը չվերհանեց այդ անձանց մահվան պատասխանատուներին և մեծամասամբ հիմնավորեց ոստիկանական արձագանքը:

ՀԱՐԳԱՆՔ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

ՄԱՍ 1. ՀԱՐԳԱՆՔ ԱՆՁԻ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

ա) Կամայական կամ անօրինական ձևով կյանքից զրկելը

Չեն եղել հաղորդումներ իշխանությունների կամ վերջինիս գործակալների կողմից կամայական կամ անօրինական սպանությունների վերաբերյալ: Այնուհանդերձ, ոչ մարտական պայմաններում բանակում գրանցված մահվան դեպքերը շարունակել են մնալ խնդրահարույց: Ըստ իշխանությունների հաղորդման տարվա ընթացում բանակում ոչ մարտական պայմաններում գրանցված մահվան դեպքերը եղել են 15-ը, ինչն ավելի քիչ է 2010թ. գրանցված դեպքերի համեմատ:

Հունիսի 29-ին Կապանում գտնվող զորամասի մոտակա անտառում հայտնաբերվեց զինծառայող Տիգրան Համբարձումյանի խեղված դին: Զինվորական պաշտոնյաները պնդում էին, որ Համբարձումյանը նախորդ օրը լքել է զորամասը և ինքնասպանություն է գործել: Համապատասխան մարմինների կողմից մահվան փաստով սկսվեց քննություն՝ ինքնասպանության հասցնելու կասկածանքով. այնուամենայնիվ տարեվերջի դրությամբ դեռ մեղադրյալներ կամ կասկածյալներ չկային: Ըստ զինվորի ծնողների իրենց որդու դիակի հայտնաբերման տեղն ու հանգամանքները չեն համապատասխանում պաշտոնական վարկածին, իսկ այն ածելու վրա, որով Համբարձումյանը ենթադրաբար ինքնասպանություն էր գործել, չեն եղել մատնահետքեր: Ըստ պաշտոնական տվյալների ածելին գտել էին դիակից ավելի քան հիսուն ֆուտ հեռավորության վրա: Ծնողները պնդում էին, որ իրենց որդին սպանվել էր սպայական կազմի անդամներից մեկի կողմից, սակայն նրանց ջանքերն ուղղված սպանության մեղադրանքով գործ հարուցելուն հաջողությամբ չպսակվեցին: Տարեվերջի դրությամբ ինքնասպանության հատկանիշներով հարուցված գործի քննությունը դեռևս ընթացքի մեջ էր:

Հունիսի 15-ին Վերաքննիչ դատարանը վերահաստատեց ոստիկաններ Աշոտ Հարությունյանի և Մորիս Հայրապետյանի 2010թ. դատավճիռը ոստիկանությունում գտնվելու ընթացքում Վահան Խալաֆյանին 2010թ. ապրիլին ինքնասպանության հասցնելու համար: Դատարանը նաև վերահաստատեց նույն գործի շրջանակում պաշտոնեական պարտականությունների չարաշահման մեջ մեղադրվող Գարիկ Դավթյանին և Գագիկ Ղազարյանին արդարացնելու որոշումը: Դատարանը կիրառեց համաներման վերաբերյալ մայիսի 26-ի որոշումը, որի համաձայն Հարությունյանի ութամյա ազատազրկման մնացյալ ժամկետը կրճատվեց մեկ-երրորդով, իսկ Մորիս Հայրապետյանի պայմանական ազատազրկումը վերացվեց:

Օգոստոսի 22-ին դատարանը լսեց 2010թ. լեյտենանտ Արտակ Նազարյանին ինքնասպանության հասցնելու գործը, որում մեղադրյալները հինգն էին՝ կապիտան Հակոբ Մանուկյանը, ավագ լեյտենանտ Վահագն Հայրապետյանը և շարքայիններ Ադիբեկ Հովհաննիսյանը, Հարութիկ Կիրակոսյանը և Մխիթար Մխիթարյանը: Հելսինկյան ասոցիացիայի գնահատմամբ գործի քննության ընթացքում տեղ էին գտել մոտ հարյուր նյութական և ընթացակարգային խախտումներ, այդ թվում՝ զենքի վրայի մատնահետքերի ոչնչացում և զենքից արձակված փամփուշտի պարկուճի ոչնչացում: Նազարյանի ընտանիքը պնդում էր, որ նա ինքնասպանություն չի գործել և բողոքարկում էր, որպեսզի հարուցվի նոր գործ սպանության հատկանիշներով,

սակայն անհաջող: Մեղադրյալները նույնպես քննադատում էին քննության ընթացքը և պնդում էին, որ անմեղ են: Դեկտեմբերի 5-ին «Ազատություն» ռադիոկայանին տված հարցազրույցում Մանուկյանի դատապաշտպանը նշեց, որ հինգ մեղադրյալները դարձել են սոսկ քավության նոխազ: Տարեվերջի դրությամբ դատավարությունը դեռ շարունակվում էր:

Մարդու իրավունքների հարցերով դիտորդները նշում են, որ զինված ուժերում հաղորդված ոչ կանոնակարգային հարաբերությունների ու մահվան միջադեպերի գերակշիռ մասի դեպքում համապատասխան մարմինները ներկայացնում են դեպքերի հոկված տարբերակները և կենտրոնացնում են հետագա քննությունն այդ նախնական վարկածը հաստատելու վրա: Դիտորդները նաև պնդում են, որ դեպքերի մեծ մասում զինված ուժեր հրաժարվում են պատժել այդ արարքների պատասխանատուներին:

Ապրիլին Նախագահ Սարգսյանը կոչ արեց առավել եռանդագին մոտեցում հանդես բերել 2008թ. անվտանգության ուժերի ու 2008թ. նախագահական ընտրությունների արդյունքները վիճարկող ցուցարարների միջև բախումների արդյունքում սպանված ութ քաղաքացիական անձանց և երկու ոստիկանների մահվան գործով քննության հարցում: Հատուկ քննչական ծառայությունը դեկտեմբերի 23-ին ներկայացրեց զեկույց շարունակվող քննության ընթացքի վերաբերյալ: Զեկույցը չվերհանեց այդ անձանց մահվան մեղավորներին և մեծամասամբ հիմնավորեց ոստիկանական արձագանքը: Զեկույցը խիստ քննադատության արժանացավ ընդդիմադիր և մարդու իրավունքների ոլորտի գործիչների կողմից:

Ազգությամբ հայ անջատողականները Հայաստանի օգնությամբ շարունակել են վերահսկել Ադրբեջանի Լեռնային Ղարաբաղի շրջանի մեծ մասը և հարակից ադրբեջանական յոթ տարածքները: Ըստ կառավարական աղբյուրների՝ Ադրբեջանի հետ սահմանի ու Լեռնային Ղարաբաղի հակամարտության շփման գծի երկայնքով տեղակայված ականների պատճառով սպանվել է մեկ և վիրավորվել երեք զինծառայող:

բ) Անհետացումներ

Քաղաքական շարժառիթներով պայմանավորված անհետացումների մասին հաղորդումներ չեն եղել:

գ) Խոշտանգումներ և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունք կամ պատիժ

Չնայած օրենսդրությամբ հիշյալ երևույթներն արգելվում են, սակայն անվտանգության ուժերի անդամները շարունակել են դրանք կանոնավոր կիրառել: Ըստ վկաների հաղորդումների ոստիկանները ձերբակալելիս և հարցաքննելիս ծեծի են ենթարկել քաղաքացիներին: Մարդու իրավունքներով զբաղվող հասարակական կազմակերպությունները (ՀԿ-ները) հնչեցրել են նմանատիպ մեղադրանքներ, և նշել են, որ հիմնականում ոստիկանության անօրինաչափ գործողությունները չեն

հաղորդվում՝ հաշվեհարդարի վախից: Ըստ իրավապաշտպան խմբերի հաղորդումների՝ ոստիկանությունից բանտեր տեղափոխված բազմաթիվ անձինք հայտնել են, որ ոստիկանության հսկողության տակ գտնվելու ժամանակ իրենք ենթարկվել են խոշտանգումների, բռնությունների կամ ահաբեկման՝ հիմնականում խոստովանություն կորզելու նպատակով: Ըստ հաղորդումների՝ ոտնձգությունների գերակշիռ մասը տեղի է ունենում ոստիկանական բաժանմունքներում, որոնք հասարակական դիտորդների կողմից չեն վերահսկվում, և ոչ թե բանտերում կամ ձերբակալվածների պահման վայրերում, որտեղ հասարակական դիտորդները մուտքի իրավունք ունեն:

Օրինակ՝ մայիսի 17-ին Քաղաքացիական հասարակության ինստիտուտը կոչ արեց արդարացիություն դրսևորել Ստեփան Հովակիմյանի և Վահրամ Քերոբյանի դատավարության ժամանակ, ովքեր պնդում էին, որ իրենք խոստովանել են Երևանի կենտրոնում գտնվող կինոթատրոնում գողություն կատարելու փաստը ոստիկանության կողմից կրկնվող ֆիզիկական ու հոգեբանական ճնշումների ենթարկվելուց հետո: Քաղաքացիական հասարակության ինստիտուտը պահանջում էր մեղադրյալներին տանջանքների ենթարկելու մեղադրանքով անկախ քննության անցկացում և գործերն ինքնամեղադրական խոստովանությունների վրա հիմնելու պրակտիկայի վերացում: Ըստ իր փաստաբանի Հովակիմյանը մի քանի անգամ անօրինական կերպով հրավիրվել է Երևանի Կենտրոն ոստիկանական բաժանմունք, որտեղ խոստովանություն կորզելու նպատակով նա ենթարկվել է ֆիզիկական ու հոգեբանական ճնշումների: Այն բանից հետո, երբ ոստիկանները սպառնացել են նրա նկատմամբ թույլ տալ սեռական ոտնձգություններ ու «բերել» նրա ընկերուհուն, Հովակիմյանն ի վերջո խոստովանական ցուցմունք է տվել: Ըստ փաստաբանի գողության ենթադրյալ տուժողը հանցանքի մասին հայտարարություն է տվել միայն այն բանից հետո, երբ Հովակիմյանը խոստովանել է, ու ոստիկանությունն էլ, այսպիսով, քննություն է իրականացրել նախքան հանցագործության մասին հաղորդում ստանալը: Ըստ դիտորդների հաղորդման՝ տանջանքների ենթարկելու վերաբերյալ հնչած մեղադրանքներով վստահարժան քննություն չի անցկացվել, իսկ դատարանը չի ընդունել Հովակիմյանի հայտարարություններն այն մասին, որ խոստովանությունը կորզվել է ճնշման ներքո: Տարեվերջի դրությամբ, դատավարությունը դեռ շարունակվում էր:

Հունիսի 21-ին ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խումբը հրապարակեց իր ամենամյա զեկույցը՝ 2010թ. վերաբերող դիտարկումներով: Զեկույցը մատնանշում էր, որ Երևան քաղաքում 888 անձանցից, որոնք ոստիկանական բաժանմունքներից տեղափոխվել են ոստիկանության համակարգի ձերբակալվածների պահման վայրեր, 175-ը, ունեցել են կապտուկներ և մարմնական վնասվածքներ: Վնասվածքների առաջացման պատճառները չեն բացահայտվել և ոչ ոք դրանց համար պատասխանատվություն չի կրել: Զեկույցը նկարագրում էր ոստիկանության պահման վայրերում կանանց և անչափահասների համար առկա ոչ

համարժեք պայմանները: Ըստ հասարակական դիտորդական խմբի՝ ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերում կին ոստիկանների բացակայության հետևանքով խախտվել են կին ձերբակալվածների մի շարք իրավունքներ, և եղել նվաստացուցիչ վերաբերմունքի որոշ դեպքեր:

Փետրվարին Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը (օմբուդսմենի գրասենյակը) հրապարակեց 2010թ. ամենամյա զեկույցը: Այնտեղ նշվում էր, որ քաղաքացիների բողոքները ոստիկանության ոչ իրավաչափ գործողությունների, այդ թվում՝ խոշտանգումների վերաբերյալ շարունակել են նախորդ տարիների համեմատ աճել: Բողոքները հիմնականում վերաբերում են քաղաքացիներին, ովքեր հայտնել են, որ բերման են ենթարկվել ոստիկանություն, ապօրինաբար պահվել այնտեղ և ենթարկվել ոչ մարդկային վերաբերմունքի, այդ թվում խոշտանգումների և ծեծի: Բողոքողները նաև նշել են, որ ոստիկանները ջանում էին բռնության, սպառնալիքի ու անօրինական նախնական կալանքի միջոցով խոստովանություններ կորզել: Ըստ զեկույցի ոստիկանությունը, որպես կանոն, ոչ բովանդակալի և նմանատիպ պատասխաններ է ներկայացրել ի պատասխան չարաշահումների մասին հնչեցված մեղադրանքների հետ կապված օմբուդսմենի հարցումներին: Զեկույցը հավելում էր, որ այդպիսի անպատժելիության մթնոլորտը հանգեցնում է նմանատիպ չարաշահումների աճին:

Զինված ուժերում կենցաղային վատ պայմանները, կոռուպցիան և տիրող անպատժելիությունն ու հրամանատարների կողմից հաշվետվողականության բացակայությունը շարունակել են վատ վերաբերմունքի դրսևորման և մարտական գործողությունների հետ կապ չունեցող վնասվածքների պատճառ հանդիսանալ: Չնայած զինված ուժերում ոչ կանոնակարգային հարաբերությունների տարածվածության վերաբերյալ հուսալի վիճակագրություն չկա, սակայն զինվորները հաղորդել են իրավապաշտպան կազմակերպություններին, որ նման չարաշահումները շարունակվել են: Զինվորների ընտանիքները հայտնել են, որ կոռումպացված պաշտոնյաները վերահսկում են զորամասերը, իսկ մարդու իրավունքների դիտորդները և օմբուդսմենը հաղորդել են այնպիսի դեպքերի մասին, երբ բանակ են զորակոչվել առողջական լուրջ խնդիրներ ունեցող զինվորական ծառայության համար ոչ պիտանի անձինք: Ըստ պաշտոնական տվյալների տարվա ընթացքում ոչ կանոնակարգային հարաբերությունների դրսևորման ու դրանց հետ կապված բռնությունների համար դատարանների կողմից դատապարտվել է 248 զինծառայող, ևս 27 գործ տարեվերջի դրությամբ դեռ գտնվում էին դատաքննության փուլում:

Օմբուդսմենի 2010թ. ամենամյա զեկույցում նշվում էր, որ զորակոչի հետ կապված բողոքների բովանդակությունը 2009թ. բողոքների համեմատ չէր փոխվել: Ընդհանուր առմամբ օմբուդսմենին դիմելիս դժգոհություն են հայտնել զինվորական ծառայության համար զորակոչիկների պիտանելիության վերաբերյալ բժշկական հանձնաժողովների կայացրած սխալ որոշումներից, զորամասերում անմիջական

ավագների, հրամանատարների ու մյուսների կողմից նորակոչիկների հանդեպ դրսևորվող բռնություններից և զորամասերում զինծառայողներին պատշաճ բուժօգնություն չցուցաբերելու դեպքերից: Դեկտեմբերի 30-ին ջրծաղկից առաջացած բարդությունների հետևանքով մահացել էր զինծառայող Հայկ Խաչատրյանը: Նրա ընտանիքը մեղադրում էր բժշկական հոսպիտալի բժիշկներին անփութություն հանդես բերելու մեջ և զորամասի հրամանատարին, ով անտեսել էր Խաչատրյանի բողոքները և ստիպել նրան վազել ավելի քան վեց մղոն:

Բանտերի ու կալանավայրերի պայմանները

Ըստ պաշտոնական տեղեկատվության բանտերում գրանցվել է մահվան 32 դեպք, իսկ 2010թ. գրանցվել էր 37 դեպք, ընդ որում երկու տարիներին էլ մահվան դեպքերի մեծ մասը վերագրվել են հիվանդություններին, իսկ որոշ մասը՝ ինքնասպանություններին: Իրավապաշտպան կազմակերպությունները մահվան դեպքերը վերագրում էին քրեակատարողական հաստատությունների գերբնակեցվածությանը, շենքային վատ պայմաններին և բանտարկյալների բուժօգնության հարցում անփութությանը: Մարդու իրավունքների դիտորդները և օմբուդսմենը հաղորդել են գերբնակեցվածություն, վատ սանիտարահիգիենիկ պայմաններ, և ոչ համարժեք բուժօգնություն և սնունդ քրեակատարողական հիմնարկներում: Քրեակատարողական հաստատությունները միացված են խմելու ջրի մատակարարման տեղական համակարգերին, սակայն երբեմն տեղի էին ունենում ջրամատակարարման ընդհատումներ:

Չնայած մայիսի 26-ին Ազգային ժողովի կողմից ընդունված համաներման արդյունքում բանտարկյալների թիվը բանտերում կրճատվել էր, սակայն գերբնակեցվածությունը շարունակում էր մնալ որպես զգալի խնդիր: Չեն եղել հաղորդումներ բռնություններ թույլ չտված հանցագործների հանդեպ այլընտրանքային պատիժների կիրառմանն ուղղված քայլերի և հաշվառումների վարումը բարելավելու վերաբերյալ: Քրեակատարողական հիմնարկները չունեն օմբուդսմեն:

Մարդու իրավունքների ակտիվիստները և փաստաբանները շարունակել են մտահոգություն հայտնել պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ու պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով հանձնաժողովների գործունեության վերաբերյալ: Փաստաբանների պալատը, որը երկրի իրավաբանների ընկերակցությունն է, բողոքում էր, որ հանձնաժողովները չունեն որոշումների ընդունման հստակ չափորոշիչներ և հունվարին հանձնաժողովների կազմից ետ կանչեց իր ներկայացուցիչներին: Բողոքարկման մեխանիզմների բացակայությունը և հանձնաժողովների կազմում իրավապահ կառույցների ներկայացուցիչների ներկայացվածության բարձր աստիճանը շարունակում էին հանդիսանալ պատշաճ իրավական ընթացակարգերի խոչընդոտ:

Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից կազմված Հասարակական մոնիտորինգի խումբը շարունակել է Արդարադատության

նախարարությանը զեկույցներ ներկայացրել մի շարք դատապարտյալների առողջության վատթարացման վերաբերյալ, որոնք ըստ նրանց պնդումների շարունակում էին մնալ բանտում՝ չնայած բավարարում էին վաղաժամկետ ազատ արձակվելու պահանջներին: Միջգերատեսչական բժշկական հանձնաժողովը, որ քննության էր առնում առողջական պատճառներով բանտարկյալների վաղաժամկետ ազատ արձակելու հարցը, չափազանց դանդաղ էր գործողություններ ձեռնարկում:

Իրավասու մարմինների տվյալներով տարվա ընթացքում քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց միջին թիվը կազմել է 4812 հոգի: Սա ներառում է նախնական կալանքի տակ գտնվողներին, որոնց միջին տարեկան թիվը կազմել է 393 հոգի և 432 կալանավորներ, որոնց գործերը եղել են ընթացքի մեջ և ովքեր սպասել են իրենց դատավճիռներին: Նախնական կալանքի տակ գտնվողները բանտարկյալներից առանձին են պահվել: Քրեակատարողական հիմնարկություններն ընդհանուր առմամբ հնարավորություն ունեն տեղավորել 4395 անձ:

Տարվա ընթացքում Աբովյանի կանանց և անչափահասների համար նախատեսված քրեակատարողական հիմնարկում պահվող կանանց և անչափահասների միջին տարեկան թիվը կազմել է համապատասխանաբար 198 և 34 հոգի: 34 անչափահաս բանտարկյալներից մեկն իգական սեռի ներկայացուցիչ էր: Անչափահաս իգական սեռի բանտարկյալների համար չկար առանձին տեղ, հիմնականում այն պատճառով որ անչափահաս աղջիկները հազվադեպ են դատապարտվում. այնուհանդերձ, դատապարտվելու դեպքում նրանք պահվում են չափահաս կանանց հետ: Բանտարկյալները տեղավորված էին մեծ հանրակացարաններում՝ անչափահաս տղաները կանանցից առանձին: Ըստ տեղական դիտորդների այս կերպ ստեղծվում էին այնպիսի պայմաններ, որոնք ավելի վատ էին, քան այն քրեակատարողական հիմնարկներում, որտեղ բանտարկյալները պահվում էին առանձին խցերում:

Ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի 2010թ. զեկույցում որպես զգալի խնդիր է նկարագրվել ոստիկանության կալանախցերի գերբնակեցվածությունն ու դրանց փաստացի օգտագործումը որպես նախնական կալանքի տակ գտնվողների պահման վայր: Օրենքի համաձայն նախնական կալանքի տակ գտնվող անձինք չեն կարող ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերում երեք օրից ավել պահվել, քանի որ այս խցերը չունեն հարմարություններ առավել երկար ժամկետով ազատազրկելու համար: Երևանից դուրս՝ մարզերում նախնական կալանքի տակ գտնվողների թիվը ոստիկանական կալանախցերում գերազանցել է ձերբակալվածների թիվը՝ ավելի քան երեքը մեկին հարաբերակցությամբ. եղել են 3500 նախնական կալանքի տակ գտնվողներ և 951 ձերբակալվածներ: Համաձայն 2010թ. զեկույցի երեք օրից ավել պահվող նախնական կալանքի տակ գտնվողների թիվն էականորեն նվազել էր: Թեպետ զեկույցը

վերաբերում էր ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերին , սակայն հասարակական դիտորդների խումբը չէր կարող մոնիտորինգ կատարել ոստիկանության բաժանմունքներում:

Իրավապաշտպան կազմակերպությունները և օմբուդսմենը շարունակել են մտահոգություն հայտնել այն մասին, որ դատապարտյալներն ու կալանավորվածները միշտ չէ որ ապահովվում են տեսակցության ողջամիտ հնարավորություններով, և նույնիսկ տեսակցությունների սահմանված նվազագույն իրավունքից չեն կարողանում օգտվել գերբնակեցված պայմանների և համապատասխան վայր չլինելու պատճառով: Օրինակ՝ օմբուդսմենի տարեկան զեկույցում նշվում է, որ Երևանի Կենտրոն քրեակատարողական հիմնարկում դատապարտյալները միայն կարճատև տեսակցություններ են ունենում իրենց ազգականների հետ, քանի որ երկարատև (ամուսնական) տեսակցությունների համար համապատասխան վայր չկա, և անգամ կարճատև տեսակցություններն անցնում են պաշտոնյայի ներկայությամբ:

Ըստ Հելսինկյան ասոցիացիայի և Վանաձորի Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի իրավասու մարմինները չեն հետաքննել անմարդկային պայմանների վերաբերյալ հնչեցված արժանահավատ մեղադրանքները: Իրավասու մարմինները միշտ չէ, որ թույլ են տվել բանտարկյալներին և կալանավորներին ներկայացնել գրաքննություն չանցած բողոքներ՝ կապված անմարդկային պայմանների մասին հնչեցված արժանահավատ մեղադրանքների հետ: Օրենքի համաձայն նախնական կալանքի տակ գտնվողների նամակագրությունը կարող է գրաքննության ենթարկվել միայն դատարանի որոշումով: Այնուհանդերձ, ըստ իրավապաշտպան կազմակերպությունների եղել են բազմաթիվ դեպքեր, երբ քրեակատարողական հիմնարկի վարչական անձնակազմի կողմից դատապարտված անձանց նամակները գրաքննության են ենթարկվել առանց դատական վերահսկողության:

Քրեակատարողական հիմնարկների կողմից իրավական ստանդարտների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար պատասխանատու է Արդարադատության նախարարության Վերահսկողության վարչությունը, սակայն տեղական իրավապաշտպան ՀԿ-ները հավաստում են, որ այն չունի բավարար կադրեր և ռեսուրսներ այս գործառույթն արդյունավետ կերպով իրականացնելու համար:

Ըստ Արդարադատության նախարարության՝ տարվա ընթացքում բանտարկյալների հանդեպ բռնություն կիրառելու վերաբերյալ հաղորդումներ կամ բողոքներ չեն եղել:

Չնայած, իշխանություններն ընդհանուր առմամբ թույլատրել են տեղական և միջազգային իրավապաշտպան խմբերին իրականացնել բանտային պայմանների մոնիտորինգ, մարտին Արդարադատության նախարարությունն արգելեց Հելսինկյան ասոցիացիային իրականացնել քրեակատարողական հիմնարկների իր շարունակական անկախ մոնիտորինգն այն բանից հետո, երբ այս ՀԿ-ն

քննադատական զեկույց հրապարակեց բանտային պայմանների մասին: Որոշումը հիմնավորելու համար Արդարադատության նախարարությունը նշեց, որ Հելսինկյան ասոցիացիայի զեկույցը «օբյեկտիվ դժգոհություն է առաջ բերել մի շարք դատապարտյալների և կալանքի տակ գտնվողների, քրեակատարողական հիմնարկների վարչական անձնակազմի և հասարակության տարբեր շերտերի շրջանում»: Կարմիր խաչի միջազգային կոմիտեին թույլատրվել է այցելել թե բանտեր, թե նախնական կալանքի կենտրոններ, ինչն էլ վերջինս իրականացրել է իր ընդունված սկզբունքների համաձայն: Իրավասու մարմինները հիմնականում թույլատրել են Հասարակական դիտորդների խմբի ներկայացուցիչներին առանց նախնական զգուշացման այցելել բանտեր:

դ) Կամայական ձերբակալություն կամ կալանավորում

Օրենքով արգելվում է կամայական ձերբակալումը և կալանավորումը: Թեպետ օրենսդրությամբ պահանջվում է համարժեք դատական քննություն, սակայն դատավորները հաճախ չեն կամենում վիճարկել անձանց կալանավորելու մասին դատախազների միջնորդությունները կամ քննել ոստիկանների պահվածքը ձերբակալություններ կատարելիս: Սահմանված օրենքներով չի պահանջում, որ հետախուզման մեջ գտնվող անձին, որի համար կարգադրագիր տրված է, ձերբակալելուն պես ներկայացնեն դատարան՝ ձերբակալությունից հետո կալանքի հարցը քննության առնելու համար: Այնուհանդերձ, Վճռաբեկ դատարանի (սահմանադրական հարցերի հետ առնչություն չունեցող գործերով երկրի բարձրագույն ատյանի դատարանի) նախադեպային իրավունքով դա պահանջվում է: Գործնականում իրավասու մարմինները ժամանակ առ ժամանակ ձերբակալել և կալանավորել են քրեական գործերով կասկածյալներին առանց ողջամիտ կասկածների: Իրավասու մարմինները շարունակել են քաղաքական կապերի կամ կառավարությանն ընդդիմադիր ընկալվող քաղաքական գործունեության համար անձանց կամայական կալանավորումների պրակտիկան, չնայած նախորդ տարիների համեմատ շատ ավելի փոքր մասշտաբով:

Ոստիկանության և անվտանգության համակարգի դերը

Ազգային ոստիկանությունը պատասխանատու է ներքին անվտանգության համար, մինչդեռ Ազգային անվտանգության ծառայությունը (ԱԱԾ) պատասխանատու է ազգային անվտանգության, հետախուզական գործունեության, սահմանային հսկողության համար. երկու կառույցների ղեկավարներն էլ նշանակվում են Նախագահի կողմից: Ոստիկանությունն ու Ազգային անվտանգության ծառայությունը դեռևս չունեն համապատասխան պատրաստվածություն, ռեսուրսներ և սահմանված ընթացակարգեր չարաշահումների դեպքերը կանխարգելելու համար: Այնուհանդերձ, ի տարբերություն նախորդ տարիների, իրավապահ մարմինները սկսել են առավել արժանահավատ քննություններ անցկացնել իրենց շարքերում տեղ գտած

չարաշահումների մեղադրանքների ուղղությամբ, այդ թվում բարձրաստիճան պաշտոնյաների կողմից թույլ տված չարաշահումների մեղադրանքներով:

Ոստիկանական չարաշահումների քննության առանձին անկախ մեխանիզմ չի եղել, մի թերություն, որ առանձնացվել է Եվրախորհրդի կողմից: Քաղաքացիները կարող են ոստիկանության դեմ հայց ներկայացնել դատարան:

Ըստ պաշտոնական տեղեկատվության ոստիկանությունում տարվա ընթացքում 35 ծառայողական քննություն է անցկացվել՝ կապված ոստիկանության աշխատակիցների անօրինաչափ և դաժան վերաբերմունքի մասին բողոքների ու հաղորդումների հետ: Գործերից 17-ի դեպքում ոստիկանությունը հիմնավորվող ապացույցներ չի գտել, չորս դեպքերի քննությունը կասեցվել է, իսկ մնացած գործերով ներգրավված ոստիկանները ենթարկվել են կարգապահական և վարչական տույժերի և նկատողությունների, այդ թվում՝ իջեցվել է ոստիկաններից մեկի կոչումը:

Չնայած, կասկածյալներն օրենսդրության համաձայն իրավունք ունեն նախքան դատավարությունը բողոք ներկայացնել քննության ընթացքում իրավապահների թույլ տված հնարավոր բռնությունների վերաբերյալ. այնուհանդերձ ենթադրյալ տուժողները պետք է ոստիկանությունից կամ դատախազությունից բժշկական փորձաքննության թույլտվություն ստանան, որն անհրաժեշտ է ֆիզիկական բռնության մեղադրանքը հաստատելու համար: Իրավապաշտպան կազմակերպությունները շարունակել են հայտնել, որ իրավասու մարմինները հազվադեպ են այդպիսի թույլտվություն տալիս կամ ձգձգում են այնքան, երբ բռնության հետքերն այլևս տեսանելի չեն: Բացի այդ, ՀԿ-ների հաղորդմամբ դատավորները սովորաբար անտեսել են մեղադրյալների այն պնդումները, թե ցուցմունքն իրենցից կորզվել է ֆիզիկական բռնությունների միջոցով:

Խնդրահարույց էր մնում կոռուպցիան ոստիկանությունում և իրավասու մարմինները ձեռնարկել են դրա դեմ պայքարելու որոշ միջոցներ, այդ թվում քրեական հետապնդման իրականացում որոշ բարձրաստիճան պաշտոնյաների նկատմամբ (տես՝ Մաս 4):

Ձերբակալության ընթացակարգեր և վերաբերմունքը կալանքի ընթացքում

Օրենքի համաձայն քննություն իրականացնող մարմինն անձին բերման ենթարկելուց հետո երեք ժամվա ընթացքում պարտավոր է կամ պաշտոնապես ձերբակալել այդ անձին, կամ ազատ արձակել: Անձին արգելանքի վերցնելուց հետո 72 ժամվա ընթացքում քննություն իրականացնող մարմինը պարտավոր է կամ ազատել ձերբակալված անձին, կամ մեղադրանք առաջադրել և կալանքի տակ պահելու կարգադրագիր ստանալ դատավորից: Դատավորները հազվադեպ են մերժում ոստիկանության կալանքի կարգադրագրի հայտերը: Երբեմն ոստիկանությունն անձանց կանչել և պահել է երեք ժամից ավել առանց նրանց պաշտոնապես ձերբակալելու, այն պատրվակով, որ նրանք գործով անցնող վկաներ են և ոչ կասկածյալներ: Տեղական դիտորդները պնդել են, որ ոստիկանությունը

խուսափում էր նրանց կասկածյալներ որակելուց, որպեսզի շրջանցի նրանց կասկածյալի կարգավիճակից բխող իրավունքներ ապահովելու իրավական պահանջը:

Օրենքը ոստիկանությունից պահանջում է տեղեկացնել արգելանքի վերցված անձանց լռություն պահպանելու, հեռախոսազանգ կատարելու և ձերբակալության պահից սկսած փաստաբանի կողմից ներկայացված լինելու իրավունքների մասին: Անվճարունակ լինելու դեպքում արգելանքի վերցված անձին պետք է տրամադրվի հանրային պաշտպան: Գործնականում ոստիկանությունը հաճախ հարցաքննել ու ճնշում է գործադրել արգելանքի վերցված անձանց վրա հանցանքներ խոստովանելու նպատակով՝ մինչև մեղադրանք առաջադրելը և առանց փաստաբանի ներկայության: Մարդկանց պահելը որպես «գործով անցնող վկաների»՝ նախքան նրանց կասկածյալ որակելը, հանգեցրել է այն փաստին, որ այդ անձինք հարցաքննվել են առանց փաստաբանի: Այս պրակտիկան ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի աշխատանքային խմբի քննադատությանն է արժանացել: Բացի այդ, ոստիկանությունը երբեմն սահմանափակել է ընտանիքի անդամների կամ փաստաբանների հետ շփման հնարավորությունն արգելանքի վերցված անձանց հետ:

Ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի 2010թ. զեկույցի համաձայն դիտորդները հայտնել են բազմաթիվ դեպքերի մասին, երբ մարդկանց պաշտոնապես ձերբակալել են ոստիկանության բաժանմունքում մեկից երեք օր պահելուց հետո: Մյուսները սահմանված երեք ժամի ընթացքում ձերբակալվել են, սակայն դրանից հետո մեկից երեք օր պահվել են ոստիկանության բաժանմունքում: Զեկույցում նշվում էր, որ ձերբակալված անձանց պահելու վայրերում գտնվել են 5339 հոգի, սակայն ըստ համապատասխան մատյաններում կատարված գրառումների արձանագրվել է փաստաբանի հետ հանդիպելու իրավունքից օգտվելու 238 դեպք, ընդ որում այս թիվը ներառում է այն դեպքերը, երբ միևնույն անձը փաստաբանի հետ հանդիպել է մի քանի անգամ: Օրենքը նախատեսում է գրավի համակարգ, սակայն գործնականում դատարանները հիմնականում մերժում են գրավի հայտերը՝ փոխարենը կարգադրելով երկարացնել մեղադրյալների նախնական կալանքը:

Որոշ դեպքերում նախքան դատը մեղադրյալն ազատ է արձակվել ստորագրությամբ՝ստանձնելով երկրի, որոշ դեպքերում քաղաքի սահմաններից չբացակայելու պարտավորություն և հանձնելով անձնագիրը:

<u>Կամայական ձերբակալություն</u>. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի աշխատանքային խումբն իր փետրվարյան զեկույցում նշում էր, որ ոստիկանությունը, Ազգային անվտանգության ծառայությունն ու սահմանապահները հաճախ արգելանքի տակ են վերցրել կամ ձերբակալել են մարդկանց՝ առանց ձերբակալության կարգադրագրի: Ձերբակալությունները հաճախ եղել են ոչ թե քննությունների հետևանք, այլ ավելի շատ մարդիկ կալանվել են քննությունը

կատարելու նպատակով: Սա համապատասխանում էր ոստիկանության ընդունված այն պրակտիկային, որ մարդիկ ձերբակալվում են քննության սկզբում խոստովանություն ստանալու նպատակով, ինչը վերացնում է հետագա քննության անհրաժեշտությունը:

Հուլիսի 13-ին ոստիկանների կողմից Երևանի Շենգավիթ համայնքի ոստիկանության բաժանմունք բերման էր ենթարկվել 14-ամյա Յուրա Սիմոնյանը: Ըստ լրատվամիջոցների ու իրավապաշտպան կազմակերպությունների Յուրա Սիմոնյանն ականատես էր եղել կրակոցներով մի միջադեպի: Հուլիսի 14-ին նրա փաստաբանը նրա հետ տեսակցելու մի քանի անհաջող փորձ է արել, բայց ոստիկանության քննիչ Կամո Շառոյանը փաստաբանին անընդհատ մերժել է: Հուլիսի 14-ին երեկոյան ոստիկանությունն ազատ է արձակել Սիմոնյանին առանց որևէ մեղադրանք ներկայացնելու: Սիմոնյանն ասում էր, որ ոստիկաններն իրեն ծեծել են ու ստիպել ասել, որ ինքը տեսել է, որ զենքից կրակել են:

Նախնական կալանքի տակ գտնվողներ. Ըստ պաշտոնական տեղեկատվության տարվա ընթացքում քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց 8 տոկոսը եղել են նախնական կալանքի տակ գտնվողները, և լրացուցիչ 9 տոկոս եղել են կալանավորված անձիք, որոնց դատաքննությունը եղել է ընթացքի մեջ:

Փաստաբանները և դատական դիտորդները դժգոհում էին, որ թեպետ օրենքը պահանջում է,որ կալանքի վերաբերյալ որոշումները լինեն ողջամիտ, և որ կալանքը դիտարկվի որպես ծայրահեղ միջոց, գործնականում կալանքի մասին որոշումները դատարանների կողմից հաճախ հաստատվում են ավտոմատ կերպով՝ հաշվի չառնելով թե արդյոք սահմանափակման ավելի նվազ աստիճան ունեցող միջոցները կարող են բավարար լինել ապահովելու արդարադատության պատշաճ իրականացումը: Կալանքի չափից ավել օգտագործումն առկա էր նաև անչափահաս իրավախախտների դեպքում:Անչափահաս իրավախախտների հետ կապված չկար առանձին արդարադատության համակարգ:

Նախնական կամ որպես խափանման միջոց կիրառվող կալանքի երկար տևողությունը շարունակել է հանդիսանալ քրոնիկ խնդիր: Թեպետ օրենքը պահանջում է լավ պատճառաբանված հիմնավորվում կալանքի տակ պահելու ժամկետի երկարաձգման համար, դատավորները հաճախ երկարաձգել են կալանքն անհասկանալի հիմքերով: Մյուս կողմից էլ իրավասու մարմինները հիմնականում հարգել են օրենքի այն դրույթը, որ նախքան դատավարության սկսելը մեղադրյալը չի կարող պահվել կալանքի տակ 12 ամսից ավել: Սակայն օրենքը չի սահմանափակում այն ժամկետը, թե մեղադրյալն ինչքան կարող է մնալ կալանքի տակ գործը դատարան ուղարկելուց հետո: Ըստ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի աշխատանքային խմբի փետրվարյան զեկույցի դատախազները հաճախակի դիմում են դատավորներին դատաքննությանը պատրաստվելու համար լրացուցիչ ժամանակ ունենալու համար դատը հետաձգելու միջնորդությամբ, ինչը բավարարվում է: Այս հետաձգումներն

օգտագործվում են որպես պատրվակ քննությունների տևողության ավելացման համար: Մյուս կողմից էլ, դատախազները պնդում են, որ դատական լսումները հետաձգելու համար պատասխանատու են դատապաշտպանները, քանի որ նրանք սովորաբար պաշպանությունը նախապատրաստելու համար լրացուցիչ ժամանակ են ցանկանում ունենալ:

Համաներում. Մայիսին Ազգային ժողովը նախագահի առաջարկով հայտարարեց ընդհանուր համաներում: Ազատ արձակվեցին 2008թ.. նախագահական ընտրությունների և հետընտրական բախումների հետ կապված դեռևս անազատության մեջ գտնվող վերջին մարդիկ (Տես՝ Մաս 1.ե.): Համաներման արդյունքում ազատ արձակվեցին 602 բանտարկյալներ և դադարեցվեց քրեական հետապնդումն ավելի քան 800 հոգու հանդեպ:

ե) Արդար հրապարակային դատաքննության իրավունքի մերժում

Օրենքը նախատեսում է անկախ դատական համակարգ. այնուամենայնիվ գործնականում դատարանները շարունակում էին ենթարկվել գործադիր իշխանության քաղաքական ճնշումներին, ինչպես նաև կար ինքնապարտադրված ակնկալիք, որ դատավորները մեղավոր են ճանաչելու գրեթե բոլորին, ում առաջադրվում է մեղադրանք: Չնայած դատական կոռուպցիան շարունակում էր գոյություն ունենալ, սակայն դատական գործեր դիտարկողները հավատացած էին, որ այն ավելի քիչ էր, քան նախկինում, մասամբ այն պատճառով, որ միջին և ցածր օղակի պետական պաշտոնյաների դեմ հարուցված կոռուպցիոն գործերի ավելացումը ստիպեցին դատավորներին գիտակցել, որ նախկինի համեմատ նրանց համար ավելի մեծ է դարձել կարգապահական տույժերի ենթարկվելու վտանգը: Միաժամանակ, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի հաղորդմամբ կոռուպցիայի դեմ ուղղված կառավարության պայքարը նաև բացասական ազդեցություն է ունեցել դատավորների անկախության վրա, քանի որ նրանք կարծես թե հակված են ավելի խիստ պատիժներ սահմանել՝ վախենալով որ իրենց կարող են կոռուպցիայի հանցակից համարել:

Արդար դատաքննության ապահովման հիմնական խոչընդոտներից մեկն անկախ դատական համակարգի բացակայությունն է: Դատավորներն իրենք չունեն արդյունավետ իրավական միջոցներ գործադիր կամ օրենսդիր մարմինների կողմից իրենց պատժելու պարագայում: Տարվա ընթացքում նախագահի հրամանով պաշտոնանկ արվեց դատավոր Սամվել Մնացականյանն այն բանի համար, որ մի գործով նա բավարարել էր մեղադրյալի միջնորդությունը գրավի դիմաց ազատ արձակելու վերաբերյալ: Մնացականյանի լիազորությունները դադարեցնելու մասին առաջարկը ներկայացրել էր ՀՀ արդարադատության խորհուրդը, քանի որ դատավորը ենթադրաբար չէր ապահովել հիմնավորում մեղադրյալի ազատ արձակման վերաբերյալ. պաշտոնանկ անելու հրամանը տրվեց, չնայած դատախազը գրավի դիմաց ազատ արձակելու հետ կապված առարկություններ չուներ, իսկ մեղադրյալն էլ ի վերջո արդարացվեց:

Տարվա ընթացքում տեղ գտած մեկ այլ դեպքում էլ Վճռաբեկ դատարանը, ըստ հաղորդումների, ստիպել է աշխատանքից դուրս գալ դատավոր Սուրիկ Ղազարյանին, և կառավարությունը նրան մերժել է դատավորի ամբողջական կենսաթոշակի նշանակումը՝ ենթադրաբար որպես հաշվեհարդար այն բանի համար, որ 2010թ. կարևոր նշանակություն ունեցող մի գործով վճիռ կայացնելիս չի խորհրդակցել Վճռաբեկ դատարանի հետ: Ղազարյանի վճիռը (բեկանված վերին ատյանի դատարանների կողմից) հաջորդել է Լոնդոնի միջազգային արբիտրաժի դատարանի ի օգուտ Մորավել Ինվեսթմենթ ՍՊԸ-ի 2005թ. կայացված վճռին, որով Յուկոս Օյլ ԲԲԸ ընկերությունը Մորավել Ինվեսթմենթին պետք է վճարեր ավելի քան 655 միլիոն ԱՄՆ դոլար: Մորավել ընկերությունը հայց էր ներկայացրել Հայաստանում՝ արբիտրաժի որոշման իրականացման և Յուկոս Օյլ ընկերության Հայաստանում գտնվող ակտիվները վերադարձնելու նպատակով: Իր կենսաթոշակի չափի հետ կապված Ղազարյանի բողոքները տարեվերջի դրությամբ դեռ ընթացք չէին ստացել:

Ընդունած որոշումների համար դատավորների պաշտոնանկ արվելու վտանգը և այդ կարգի վերաբերմունքին արձագանքելու արդյունավետ իրավական միջոցների բացակայությունն ուժեղ սթափեցնող ազդեցություն ունեն դատական համակարգի վրա: Արդարադատության խորհուրդը կարող է դատավորին մեղադրել սխալ վճիռ կայացնելու մեջ, նույնիսկ եթե վճիռը որևէ վերադաս դատարանում չի բողոքարկվել կամ վերաքննիչ դատարանների կողմից որոշման մեջ որևէ սխալներ չեն հայտնաբերվել: Արդարադատության խորհրդի որոշումները վերանայման ենթակա չեն: Ըստ հաղորդումների, Վճռաբեկ դատարանը ստորին ատյանի դատավորներին ուղղակիորեն թելադրել է գրեթե բոլոր գործերի ելքերը:

Իրավասու մարմիններն ընդհանուր առմամբ կատարել են դատարանի վճիռները:

Դատաքննությունները սովորաբար բավարարել են արդարության ընթացակարգային ստանդարտներից շատերին. այնուհանդերձ, դրանք հաճախ անարդարացի են եղել էությամբ, քանի որ շատ դատավորներ իրենց հարկադրված են զգում աշխատել դատախազների հետ՝ հասնելու դատապարտման: Դատավորները չեն կամեցել կասկածի տակ դնել ոստիկանության փորձագետների եզրակացությունները կամ պահանջել մեղադրող կողմից ներկայացնել մեղքի համարժեք բարձ մակարդակի ապացույցներ, դրանով իսկ խոչընդոտելով մեղադրյալի պատշաճ պաշտպանության հնարավորությունը:

Դատաքննություն

Օրենքով սահմանվում է անմեղության կանխավարկածը, սակայն գործնականում այս իրավունքը խախտվել է: Օրենքով պահանջվում է, որ հիմնականում դատական լսումները լինեն դռնբաց, սակայն առանձին դեպքերում, մասնավորապես՝ «հանրության բարքերի», պետական անվտանգության կամ «մասնակիցների անձնական կյանքի պաշտպանության» շահերից ելնելով կան

բացառություններ: Դատավարությունների ժամանակ չկան երդվյալ ատենակալներ: Ընդհանուր իրավասության դատարաններում դատավճիռ կայացվում է մեկ դատավորի կողմից (բացի այն դեպքերից, երբ հանցանքի համար կարող է սահմանվել ցմահ բանտարկություն), իսկ ավելի բարձր ատյանի դատարաններում՝ դատավորների խորհրդի կողմից: Մեղադրյալներն ունեն իրենց ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունք, իսկ պետությունը պարտավոր է մեղադրյալներին փաստաբան՝ հանրային պաշտպան առաջարկել, եթե նրանք դա պահանջում են: Սակայն այս պարտավորությունը մարզերում՝ Երևանից դուրս, միշտ չէ որ հարգվել է՝ փաստաբանների թվի սղության պատճառով:

Օրենքի համաձայն մեղադրյալները կարող են պահանջել առերեսում վկաների հետ, ներկայացնել ապացույցներ, ծանոթանալ գործի նյութերին նախքան դատավարությունը, սակայն գործնականում մեղադրյալներն ու նրանց փաստաբանները շատ սահմանափակ հնարավորություն են ունեցել առարկություններ ներկայացնելու պետական մեղադրողի կողմից ներգրավված վկաներին: Սա հատկապես սահմանափակում է այն մեղադրյալներին, ովքեր վիճարկում են ոստիկանության ապացույցները, քանի որ օրենքի համաձայն ոստիկաններին արգելվում է ի պաշտոնե ցուցմունք տալ, եթե նրանք չեն հանդիսանում գործով վկա կամ տուժող: Այսպիսով, հանցանքի վայրում հայտնաբերված իրեղեն ապացույցների մասին ոստիկանության պաշտոնական հաշվետվությունները կամ մեղադրյալի խոստովանությունը սովորաբար ընդունվել են որպես ապացույց՝ առանց դատարանում դրանց վերաբերյալ ոստիկանական ցուցմունքների: Պաշտպանությունը ներկայացնող փաստաբաններն այս պաշտոնական հաշվետվությունները վիճարկելու հնարավորություն համարյա չունեն, և դրանք հիմնականում դատարանների կողմից ընդունվում են որպես անառարկելի: Դատավորներն էին վերահսկում «վկաների ցանկը», որով որոշվում էր, թե որ վկաներն են գործից բխող ապացույցներ ներկայացնում, իսկ պաշտպանությունը ներկայացնող փաստաբանները բողոքում էին, որ երբեմն իրենց թույլ չի տրվել կանչել կամ դատավարությանն ապահովել այնպիսի վկաների հրավիրումը, որոնք իրենց գնահատմամբ ունեին ապացույցներ, որ կարող էին օգտակար լինել իրենց պաշտպանյալի համար: Մեղադրյալները, դատախազները և տուժող կողմն ունեն բողոքարկման իրավունք և դրանից հաճախ են օգտվում:

Հելսինկյան ասոցիացիան իր 2011թ. տարեկան զեկուցում նշում էր, որ դատավորները ժամանակ առ ժամանակ այնպես են հարցաքննել մեղադրյալին, որ կարծես նրանց արդեն մեղավոր են ճանաչել և առանց հիմնավորելու մերժում են պաշտպանության միջնորդությունները՝ սահմանափակվելով միայն դատախազի կողմից ներկայացրած ապացույցներով ու միջնորդություններով: Ըստ Հելսինկյան ասոցիացիայի դատավորները ժամանակ առ ժամանակ արգելել են անկախ դիտորդներին ներկա գտնվել դատական լսումներին և հազվադեպ են վստահել տանջանքների ենթարկելու մասին մեղադրյալների պնդումներին:

Ինչպես և նախկինում դատարան ուղարկված քրեական գործերի ճնշող մեծամասնությունն ավարտվում էր դատապարտումներով: Չնայած բազմաթիվ թույլ գործեր ավարտվում են դատապարտմամբ,այնուամենայնիվ դատապարտումների բարձր ցուցանիշը նաև կարող է վերագրվել ոստիկանության այն պրակտիկային, որ քննիչները հրաժարվում են դատարան ուղարկել թույլ գործեր: Տարվա ընթացքում արդարացման վճիռ է կայացվել լսված գործերի 1.9 տոկոսի վերաբերյալ, մինչդեռ 2010թ. այդ ցուցանիշը կազմում էր 0.9 տոկոս:

Քաղաքական բանտարկյալներ և կալանավորվածներ

Տարվա ընթացքում իշխանություններն ազատ են արձակել 2008թ. նախագահական ընտրությունների ու հետընտրական անհանգստությունների առնչությամբ դեռևս անազատության մեջ գտնվող վերջին վեց անձանց: Ոմանք վաղաժամկետ ազատ արձակվեցին, իսկ մյուսներն ազատվեցին մայիսին հայտարարված համաներման արդյունքում:

Նոյեմբերի 11-ին Մալաթիա-Սեբաստիա համայնքի ընդհանուր իրավասության դատարանը վեց ամսվա ազատազրկման դատապարտեց Եհովայի վկա Անդրանիկ Մակվեցյանին և դատարանի դահլիճից կալանքի տակ վերցրեց: Ի սկզբանե Մակվեցյանին առաջադրված էր ծեծի, սպառնալիքի և ինքնիրավչության մեղադրանքներ եկեղեցու հարակից հասարակական տարածքում Հայաստանյայց առաքելական եկեղեցու քահանա Արտակ Արթենյանի հետ վիճաբանության միջադեպի կապակցությամբ: Այս մեղադրանքներով դատարանը Մակվեցյանին արդարացեց, սակայն դատապարտեց նրան եկեղեցու մերձակայքում Արթենյանի «քարոզչության իրավունքը» խախտելու և նրա Մակվեցյանի կողմից հոգեորսություն կատարելը «կանխելու իրավունքը» ոտնահարելու համար: Քաղաքացիական հասարակության ինստիտուտն անկախ փորձագիտական վերլուծություն (*amicus curiae*) ներկայացրեց վերաքննիչ դատարան: Քաղաքացիական հասարակության ինստիտուտի գնահատմամբ ընդհանուր իրավասության դատարանը Մակվեցյանին մեղավոր է ճանաչել այնպիսի իրավունքների ոտնահարման համար, որոնք Հայաստանում գոյություն չունեն: Փորձագիտական վերլուծությամբ նաև եզրակացվում էր, որ դատապարտումը Մակվեցյանի անձնական համոզմունքներն արտահայտելու իրավունքին ուղղված անարդարացի միջամտություն էր և ոտնահարում էր նրա կրոնական ազատության իրավունքը: Տարեվերջի դրությամբ Մակվեցյանը դեռ բանտում էր և սպասում էր իր վերաքննիչ բողոքի հետագա ընթացքին:

Մարդու իրավունքների տարածաշրջանային դատարանների որոշումներ

Տեղում իրավական կարգավորման միջոցները սպառելուց հետո քաղաքացիները կարող են դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան (ՄԻԵԴ)՝ ներկայացնելով պետության կողմից Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով սահմանված իրավունքների հնարավոր խախտումների վերաբերյալ իրենց գանգատները: Տարեվերջի դրությամբ տասնյակ գանգատներ դատարանի

կողմից դեռ լուծված չէին: Տարվա ընթացքում ՄԻԵԴ-ը կայացրել է երկրի հետ կապված երեք վճիռ, որոնցից երկուսով արձանագրել է կոնվենցիայով սահմանված իրավունքների խախտում պետության կողմից:

Տարվա ընթացքում Բայաթյանն ընդդեմ Հայաստանի գործով ՄԻԵԴ-ը վճիռ կայացրեց, որ ժամկետային ծառայությունից խուսափելու համար դիմումատուի ազատազրկումը հանդիսանում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի խախտում: Տարեվերջի դրությամբ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվող զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից դավանական նկատառումներով հրաժարված 58 անձ գտնվում էին բանտում: Պետությունը դիմումատուին վճարեց ՄԻԵԴ վճռով սահմանված գումարը: Ըստ արդարադատության նախարարության ՄԻԵԴ-ի վճիռը կիրառելի չէ այլընտրանքային ծառայությունից հրաժարվելու համար ազատազրկված անձանց նկատմամբ, քանի որ Բայաթյանի ազատազրկման ժամանակ այլընտրանքային ծառայություն օրենքով դեռևս սահմանված չէր:

Պետությունն ընդհանուր առմամբ կատարում է ՄԻԵԴ վճիռները:

Քաղաքացիական դատավարություն ու դատական պաշտպանության միջոցներ

Քաղաքացիները կարող են դիմել դատարաններ մարդու իրավունքների ոտնահարման դեպքում վնասի փոխհատուցման կամ ոտնահարումը դադարացնելու հայցերով, այնուհանդերձ, դատարանները լայնորեն ընկալվում են որպես կոռումպացված կառույց ու քաղաքացիական գործերի հնարավոր հայցվորները հաճախ հայց հարուցելուց առաջ համեմատում էին, թե ով ունի ավելի շատ ռեսուրսներ դատավորի վրա ներազդելու համար՝ իրենք, թե պատասխանողը: Քաղաքացիները կարող են նաև դիմումներ ու բողոքները ներկայացնել Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ, ինչպես նաև վիճարկել օրենսդրության սահմանադրականությունը Սահմանադրական դատարանում: Տարվա ընթացքում Սահմանադրական դատարանն ավելի քան 40 գործով որոշումներ է կայացրել օրենքների սահմանադրականության վերաբերյալ, սակայն գործնականում որոշումների իրականացումը եղել է անհամաչափ, քանի որ ստորին ատյանի դատարանները հաշվետու են Վճռաբեկ դատարանին, և ոչ թե Սահմանադրական դատարանին:

զ) Կամայական միջամտություն անձնական և ընտանեկան կյանքի, բնակարանի անձեռնմխելիության կամ նամակագրության գաղտնիության նկատմամբ

Չնայած սահմանադրությամբ արգելվում են չարտոնված խուզարկությունները և ամրագրվում է քաղաքացիների անձնական կյանքի և հաղորդակցության գաղտնիությունը, սակայն եղել են չհաստատված հաղորդումներ այն մասին, որ գործնականում իշխանությունները ժամանակ առ ժամանակ խախտել են այս իրավունքները և իրավապահ մարմինները գաղտնալսել են որոշ անձանց հեռախոսային խոսակցությունները և հետևել նրանց էլ. փոստի նամակագրությունը,

ում իշխանությունները ցանկացել են ուշադրության կենտրոնում պահել (այդ թվում՝ մարդու իրավունքների ակտիվիստների և քաղաքական ընդդիմության ներկայացուցիչների):

Իրավապահ մարմինները կարող են հեռախոսային խոսակցությունները լսել, նամակագրությանը հետևել կամ խուզարկություն կատարել միայն դատավորից թույլտվություն ձեռք բերելուց հետո: Իրավապահ մարմիններն ընդհանուր առմամբ հետևել են այս իրավական ընթացակարգին, սակայն փաստաբանները պնդում էին, որ դատավորները, ովքեր պետք է նման գործողությունների թույլտվություն շնորհեն միայն հանցավոր գործունեության մասին հիմնավոր փաստարկների հիման վրա, թույլտվություն շնորհել են կամայականորեն՝ ընդհանուր առմամբ սահմանված ընթացակարգը դարձնելով ձևականություն:

ՄԱՍ 2. ՀԱՐԳԱՆՔ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ

ա) Խոսքի և մամուլի ազատություն

Խոսքի և մամուլի ազատության կարգավիճակը

Սահմանադրությամբ ամրագրվում է խոսքի և մամուլի ազատությունը, սակայն գործնականում կառավարությունը միշտ չէ, որ ապահովել է այս իրավունքները: Լրագրողների դեմ բռնությունների դեպքերը նվազել են, սակայն ազատ խոսքի իրավունքը սահմանափակվել է զրպարտության ու վիրավորանքի հայցերի հսկա ալիքով և այդ հայցերով քաղաքական կապեր ունեցող գործարար էլիտայի ներկայացուցիչներին վճարվել են մեծ դրամական փոխհատուցումներ ընդդիմադիր լրատվամիջոցների ու լրագրողների կողմից: Լրատվամիջոցներն ինքնագրաքննություն են կիրառել՝ վախենալով, որ քաղաքական կապեր ունեցող էլիտայի վերաբերյալ տեղեկություններ հրապարակելիս կարող են մեծ դրամական տուգանքներ վճարել: Լրատվական դաշտում, հատկապես՝ հեռուստաեթերում քաղաքական բազմակարծության ու օբյեկտիվ լուսաբանման բացակայությունը շարունակվել է: Անալոգային հեռուստատեսությունից թվայինի անցում կատարելու գործընթացում ևս սահմանափակվեցին հեռարձակվող ալիքների քանակն ու բազմազանությունը: Իշխանությունները չհրապարակեցին Հայաստանի ռադիոհեռուստատեսային հաճախականությունների մասին աուդիտի տվյալները, որի հիման վրա տեխնիկապես հիմնավորվել էր թվային հեռարձակման լիցենզիաների թվի սահմանափակումը:

<u>Մամուլի ազատություն</u>. Լրագրերի գերակշիռ մասը մասնավոր են, բացառությամբ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի ու դրա ռուսալեզու «Ռեսպուբլիկա Արմենիի» տարբերակի, որոնք հրատարակվում են պետական ֆինանսավորմամբ: Տպագիր լրատվամիջոցներն ընդհանուր առմամբ ապահովել են տարբեր տեսակետների ներկայացումը, սակայն նրանց մեծ մասը հակված են եղել

արտացոլել իրենց սեփականատերերի կամ ֆինանսական հովանավորների քաղաքական դիրքորոշումները: Այս հրատարակությունները ֆինանսավորող քաղաքական խմբավորումներն ու տնտեսական շահեր ներկայացնող խմբերն առանձնակի հետաքրքրություն չեն ցուցաբերում արդարացի ու հավասարակշված համապետական լուսաբանում զարգացնելու մեջ: Միայն սակավաթիվ լրագրեր են, որ գործել են որպես արդյունավետ և ինքնածախսածածկվող ընկերություններ:

Առցանց վեբկայքերը եղել են տեղեկատվության ամենաանկախ աղբյուրը երկրում: Սոցիալական լրատվամիջոցները, ինչպիսիք են Facebook-ը և YouTube-ը Հայաստանում սոցիալական բանավեճի խթանման հարցում որոշակի ազդեցություն են ձեռք բերել, որը գնալով մեծանում է:

Լրագրերի շրջանառությունը շարունակում էր մնալ սահմանափակ, ինչը կարելի է ասել նաև 21 ռադիոկայանների լսարանի մասին, որոնցից երեքը հանրային ռադիոկայաններ են, իսկ երկուսը հեռարձակվում են արտերկրից: Տարվա ընթացքում գործող բոլոր 82 հեռուստաընկերությունները, բացի երեք հեռուստաընկերություններից , մասնավոր էին, իսկ երկրում գործող հեռուստաընկերությունների մեծ մասը մարզերում տեղակայված փոքր տեղական հեռարձակողներն էին: Չորս հեռուստաընկերություններ հեռարձակվում էին արտերկրից: Հեռարձակող լրատվամիջոցների մեծ մասը պատկանում էին իշխանական կուսակցության քաղաքական գործիչներին կամ քաղաքական կապեր ունեցող գործարարներին և ներկայացնում էին դեպքերի միակողմանի լուսաբանում: Մարզային հեռուստաընկերությունները ներկայացնում էին որոշակի այլընտրանքային տեսակետներ, սովորաբար արտաքին արտադրության նյութերի միջոցով:

<u>Բռնություն և ոտնձգություններ</u>. Լրատվամիջոցները, մասնավորապես՝ հեռարձակող լրատվամիջոցներն իշխանություններին քննադատող նյութեր ներկայացնելու դեպքում վախենում էին հաշվեհարդարից: Հաշվեհարդարի դրսևորումներ կարող էին լինել դատական հայցերը, հեռարձակման լիցենզիան կորցնելու սպառնալիքը, կամայական հարկային ստուգումները կամ եկամուտների կորուստը, երբ գովազդատուներն իմանում էին, որ լրատվամիջոցը բարեհաճ չի տրամադրված իշխանություններին: Հաշվեհարդարի այս վախը հանգեցրել է լրատվամիջոցներում ինքնագրաքննության բարձր աստիճանի:

<u>Գրաքննություն ու բովանդակային սահմանափակումներ</u>. Գյումրում գործող ԳԱԼԱ հեռուստաընկերությունը շարունակել է հեռարձակման իրավունքների հետ կապված իրավական վեճերը: Հեռուստաընկերության դժվարությունները սկիզբ էին առել 2007թ. վերջին, երբ ԳԱԼԱ-ն հրաժարվեց բովանդակային սահմանափակում մտցնել ու շարունակեց եթերաժամանակ հատկացնել ընդդիմությանը՝ 2008թ. նախագահական ընտրությունների նախաշեմին: Փետրվարի 17-ին ԳԱԼԱ հեռուստաընկերության դեմ հեռուստաաշտարակի օգտագործման հետ կապված Գյումրու քաղաքապետարանի (քաղաքապետարանի պնդմամբ

հեռուստաաշտարակը պատկանում էր իրենց) ներկայացրած հայցին ի պատասխան ընդհանուր իրավասության դատարանը որոշեց, որ ԳԱԼԱ-ն պետք է իր հաղորդիչ-ալեհավաքը և մալուխները հանի հեռուստաաշտարակից: Վերաքննիչ ու Վճռաբեկ դատարանները որոշումը թողեցին անփոփոխ: Վճռի ընդունումից հետո ԳԱԼԱ-ն դիմեց Կապի և տրանսպորտի նախարարությանն իր ալեհավաքն ու սարքավորումները Գյումրու կենտրոնական հեռուստաաշտարակ տեղափոխելու խնդրանքով: Ի տարբերություն նման դիմումների ներկայացման նախորդ դեպքերի, նախարարությունն ընդունելի պայմաններով թույլատրեց դա անել, և հոկտեմբերի 25-ին ԳԱԼԱ-ն տեղափոխեց իր սարքավորումները և սկսեց հեռարձակումը կենտրոնական աշտարակից՝ հաղորդումների նվազագույն ընդմիջմամբ: ԳԱԼԱ-ն շարունակում էր խնդիրներ ունենալ գովազդատուների ներգրավելու հարցում, ովքեր ԳԱԼԱ-ի պնդմամբ չէին ցանկանում հովանավորել հեռուստաընկերությանն իշխանությունների ճնշման ներքո:

Հոկտեմբերի 3-ին վարչական դատարանը մերժեց Ա1+ անկախ հեռուստատեսային լրատվական ընկերության հայցը Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի (ՀՌԱՀ) կողմից ընկերության հեռարձակման լիցենզիայի հայտը մերժելու որոշումը չեղյալ համարելու վերաբերյալ: Սա հաճախականություն ստանալու 13-րդ մերժումն էր այն բանից հետո, երբ Ա1+-ը 2002թ.-ին դուրս մղվեց հեռուստաեթերից: Ըստ Ա1+-ի՝ իրենք որոշումը չեղյալ համարելու հայց են ներկայացրել մրցույթում հաղթած մրցակցի ներկայացրած մրցութային փաթեթին ծանոթանալուց և դրանցում մի շարք անհամապատասխանություններ ու կեղծիքներ գտնելուց հետո: Ա1+-ը պնդում էր, որ հանձնաժողովն իրենց հայտը մերժելով թույլ է տվել ընթացակարգային խախտումներ: Ա1+ շարունակում էր իր ակտիվ ներկայությունը համացանցում:

Սեպտեմբերի 9-ին Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի բանաձևում այլ հարցերի հետ միասին անդրադարձ եղավ Ա1+-ի գործին: Այնտեղ նշվում էր. «2010թ. դեկտեմբերին անցկացված լիցենզավորման մրցույթի արդյունքները լրատվական միջավայրում բազմակարծության ավելացմանը չհանգեցրեցին», իսկ «իշխանությունները, այս դեպքում Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը, ամբողջովին գիտակցելով, թե ինչպիսի կարևորություն դա ուներ՝ մերժեցին Ա1+-ի հայտը կարծես թե զուտ տեխնիկական/վարչական փաստարկների հիման վրա »:

<u>Զրպարտության մասին դրույթներ/Ազգային անվտանգություն</u>. Զրպարտության ապաքրեականացումը 2010թ. սկզբում ողջունվեց բազմաթիվ լրատվամիջոցների և մարդու իրավունքների հարցերով դիտորդների կողմից: Այնուհանդերձ, քանի որ այդ նույն դրույթներով սահմանվում էր վնասի փոխհատուցման համեմատաբար բարձր առավելագույն սահմանաչափ, որ կարող էր նշանակվել դատարանի կողմից զրպարտության քաղաքացիական հայցերով, այն բերեց սթափ լրատվական միջավայրի, որտեղ լրատվական ընկերությունները կշեռքի

նժարին են դնում իրենց հաղորդումների անկեղծությունը և այն հեռանկարը, որ կարող են հաշվեհարդար հանդիսացող դատական հայցի թիրախ դառնալ, որոնց արդյունքում դուրս կմղվեին դաշտից: Դատարանի մի շարք վճիռներից հետո, որոնք լրագրերի համար սահմանում էին մեծ գումար կազմող տույժեր, իրավասու մարմինները հետևեցին տեղեկատվական վեճերի խորհուրդ ձևավորելու վերաբերյալ օմբուդսմենի կոչին: Խորհուրդը՝ իրավաբանների ու լրագրողների մասնակցությամբ, ուսումնասիրեց տարվա ընթացքում դատարանների կողմից քննված զրպարտության գործերը և փորձագիտական գնահատական տվեց առանձին գործերով, որոնք հրապարակվեցին լրատվամիջոցներում, ինչպես նաև ուղարկվեցին դատարաններ ու հարակից կազմակերպություններ: Գործերից մեկի հետ կապված դատարանը լսման ժամանակ հաշվի առավ խորհրդի հրապարակած զեկույցը:

Նոյեմբերի 15-ին Սահմանադրական դատարանը, քննելով օմբուդսմենի կողմից ներկայացված հայցը, հաստատեց 2010թ. օրենքի սահմանադրականությունը: Այնուհանդերձ, դատարանն առաջարկեց, որ ստորին ատյանի դատարանները չպետք է լրատվամիջոցներին պատասխանատվության ենթարկեն փաստերի քննադատական գնահատումների համար կամ էլ դատապարտելու դեպքում նշանակեն անհամաչափ մեծ տույժեր:

Ապրիլին նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանը վեց միլիոն ՀՀ դրամի (15,584 ԱՄՆ դոլար) հայց ներկայացրեց ընդդեմ «Հրապարակ» օրաթերթի, այն բանից հետո, երբ թերթում հրապարակված մի հոդվածում նրան կոչել էին «արյունախում»: Դատարանը համաձայնություն էր տվել լրատվամիջոցի ակտիվների ժամանակավոր սառեցման վերաբերյալ: Տարեվերջի դրությամբ գործը դեռ լուծված չէր:

Համացանցի ազատություն

Տարվա ընթացքում չեն եղել կառավարության կողմից համացանցի/ինտերնետի հասանելիության սահմանափակումներ կամ վստահարժան հաղորդումներ կառավարության կողմից էլեկտրոնային փոստի կամ համացանցային ճեպազրույցների վերահսկման մասին: Անհատները և խմբերը կարողացել են տեսակետներ արտահայտել համացանցի միջոցով, ինչպես նաև էլ. փոստով:

Ուսումնակրթական ազատություն ու մշակութային միջոցառումներ

Իշխանությունների կողմից ուսումնակրթական ազատության ու մշակութային միջոցառումների սահմանափակումների մասին հաղորդումներ չեն եղել:

բ) Խաղաղ հավաքներ կազմակերպելու ու միավորումներ կազմելու ազատություն

Հավաքների ազատություն

Սահմանադրությամբ ու օրենքներով ամրագրված է հավաքների ազատության իրավունքը, սակայն իշխանությունները ժամանակ առ ժամանակ սահմանափակել են այս իրավունքը: Ապրիլին Ազգային ժողովն ընդունեց նոր օրենք հավաքների

ազատության մասին: Օրենքի նախագծի սկզբնական տարբերակները քննության առած միջազգային փորձագետները, այդ թվում Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովից ու ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների ու մարդու իրավունքների գրասենյակից, համարում էին, որ գործող օրենքի համեմատ այն բարելավված է: Ընդունումից հետո սակայն տեղական ու ԵԱՀԿ փորձագետները մտահոգություն հայտնեցին, որ օրենքի ընդունման ձևն ու արագությունն Ազգային ժողովի կանոնակարգի ակնհայտ խախտում էին հանդիսանում և որ օրենքի վերջնական տարբերակում կային չմասնավորեցված սահմանափակումներ, որոնք պետական մարմիններին արգելելու չափից մեծ լիազորություններ էին տալիս: Առավել անհանգստացնող դրույթներից էր այն, որ հավաքն արգելվում է, եթե անցկացվելու է «Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, կառավարության նստավայրերից, դատարաններից կամ քրեակատարողական հիմնարկներից այնպիսի հեռավորության վրա, որի դեպքում այն սպառնում է դրանց բնականոն գործունեությանը»: Քանի որ օրենքը չէր սահմանում հեռավորությունը, գործնականում իրավասու մարմինները կարող են այս դրույթն օգտագործել բողոքի սովորական ակցիաներին խոչընդոտելու համար:

Տարվա սկզբում առնվազն երկու անգամ իրավասու մարմինները հրաժարվել են ընդունել ընդդիմադիր Հայ ազգային կոնգրեսի ծանուցումներն Ազատության հրապարակում հանրահավաք անցկացնելու վերաբերյալ: Մարտի 17-ին իրավասու մարմինները թույլատրեցին ինքնաբուխ ցույցի անցկացումն Ազատության հրապարակում: Ապրիլի 28-ից սկսած, երբ խորհրդարանը հաստատեց հավաքների ազատության մասին նոր օրենքը, իշխանությունները սկսեցին պաշտոնապես թույլատրել ցույցերի ու ընդդիմության հանրահավաքների անցկացումը մայրաքաղաքի այն վայրերում, որտեղ դրանց անցկացումը սահմանափակված էր, և բոլորն անցան առանց միջադեպերի, չնայած ժամանակ առ ժամանակ խոչընդոտվում էր հանրահավաքների մասնակցելու համար Երևան եկող ցուցարարների մուտքը Երևան:

Միավորումներ կազմելու ազատություն

Միավորումներ կազմելու ազատությունն ամրագրված է Սահմանադրությամբ, և, ընդհանուր առմամբ կառավարությունը գործնականում հարգել է այն: Այնուամենայնիվ, բոլոր քաղաքական կուսակցությունների, միությունների, աշխարհիկ և կրոնական կազմակերպությունների գրանցման պահանջները շարունակել են մնալ խրթին: Օրենքով քաղաքացիները, բացառությամբ զինված ուժերի և իրավապահ մարմինների ծառայողների, իրավունք ունեն կազմելու միություններ, ներառյալ՝ քաղաքական կուսակցություններ և արհմիություններ:

գ) Կրոնի ազատություն

Կրոնական ազատությունների նկարագիրը տես՝ Պետքարտուղարության *Կրոնական ազատությունների մասին զեկույցը* www.state.gov/j/drl//irf/rpt էջում:

դ) Տեղաշարժվելու ազատություն, ներքին տեղահանված անձինք, փախստականների պաշտպանություն և քաղաքացիություն չունեցող անձինք

Օրենքով ապահովվում է երկրի ներսում տեղաշարժվելու, արտասահմանյան ուղևորությունների, արտագաղթի և հայրենադարձության ազատությունը: Գործնականում եղել են որոշ հաղորդումներ քաղաքական հանրահավաքների մասնակցության հետ կապված տեղաշարժի որոշ սահմանափակումների վերաբերյալ: Ներքին տեղահանված անձանց, փախստականներին, վերադարձող փախստականներին ու ապաստան հայցողներին, քաղաքացիություն չունեցող անձանց ու այլոց պաշտպանելու ու աջակցելու նպատակով իրավասու մարմինները համագործակցել են ՄԱԿ-ի փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարի (UNHCR) և մարդասիրական այլ կազմակերպությունների հետ:

Տեղաշարժը երկրի ներսում. Տարվա ընթացքում հաղորդումներ են եղել, որ իրավասու մարմինները սահմանափակել են տեղաշարժվելու ազատությունը՝ խոչընդոտելով Երևանից դուրս բնակվող քաղաքացիների մուտքը մայրաքաղաք ընդդիմության հանրահավաքներին մասնակցելու նպատակով: Փետրվարին իրավասու մարմիններն ըստ հաղորդումների խոչընդոտեցին Գյումրուց Վանաձոր գնացող մեքենաների մուտքը Վանաձոր, որտեղ բողոքի ակցիաներ էին անցկացվում ավտոմեքենաների գրանցման պահանջների փոփոխման դեմ: Հոկտեմբերի 6-ին օմբուդսմենը բողոքներ ստացավ այն մասին, որ ուղևորափոխադրումներ իրականացնող ընկերությունները դադարեցնում են փոխադրումների իրականացումն այնպիսի ժամերի, որոնք համընկնում են պլանավորված հանրահավաքների հետ: Օմբուդսմենի հարցմանն ի պատասխան Կապի և տրանսպորտի նախարարությունը հաստատեց ուղևորափոխադրումների ընդհատումների փաստը որոշ երթուղիներում և նախազգուշացրեց բոլոր ուղևորափոխադրում իրականացնող ընկերություններին, մասնավորապես Էջմիածին և Աբովյան քաղաքների, որ սպասարկման ժամանակավոր դադարեցումները կրկնվելու դեպքում այդ ընկերությունները կկորցնեն իրենց լիցենզիաները:

Արտասահմանյան ուղևորություններ. Ժամանակավոր կամ մշտապես երկրից հեռանալու համար քաղաքացիները պետք է ելքի վիզա ձեռք բերեն: Ժամանակավոր երկրից բացակայելու համար անհրաժեշտ ելքի վիզա կարելի է մեկ օրվա ընթացքում հեշտությամբ ձեռք բերել՝ վճարելով 1000 դրամ (2.6 ԱՄՆ դոլար) յուրաքանչյուր տարվա համար:

Ներքին տեղահանված անձինք (ՆՏԱ)

Ադրբեջանի հետ Լեռնային Ղարաբաղի պատերազմի ընթացքում կառավարությունը սահմանային գոտիներից տարհանել է մոտավորապես 65000 տնային տնտեսություն, բայց մեծամասնությունը հետո վերադարձել են իրենց բնակավայրերը կամ բնակություն են հաստատել այլ վայրերում: 2010թ. սեպտեմբերին երկիր կատարած այցի ընթացքում Ներքին տեղահանվածների մարդու

իրավունքների հարցերով ՄԱԿ-ի ներկայացուցիչ Վալտեր Քելինը երկրում գտնվող որոշ ՆՏԱ-ների ու նախկին փախստականների համար որպես դեռևս պահպանված խոչընդոտներ առանձնացրեց համարժեք բնակարանային պայմանների բացակայությունն ու սահմանափակ տնտեսական հնարավորությունները:

Փախստականների պաշտպանություն

Ապաստանի հասանելիություն. Օրենքների համաձայն նախատեսվում է անձանց փախստականի կամ ապաստան հայցողի կարգավիճակի տրամադրում, և կառավարությունը ստեղծել է փախստականներին պաշտպանություն տրամադրելու համակարգ:

Չարաշահումներ փախստականների նկատմամբ. Ապաստան հայցողները, ովքեր պատիժ էին կրում երկիր անօրինական մուտք գործելու համար, ընդհանուր առմամբ դիմումի գրանցումից հետո ազատ չեն արձակվել և նրանցից պահանջվել է կրել պատժի մնացած մասը:

Հիմնական ծառայությունների հասանելիությունը. Ինստիտուցիոնալ հզորությունների բացակայության պատճառով իշխանություններն ապաստան հայցողներին մշտական բնակության իրավունք տալուց հետո հաճախ դժվարանում էին նրանց հասարակությանն ինտեգրելու հարցում: Փախստականներին տրամադրվող կացարանները սովորաբար եղել են ոչ բավարար քանակության և ունեցել են վատ պայմաններ: Փախստականներն ունեն սոցիալ-տնտեսական նույն խնդիրները, ինչ ընդհանուր բնակչությունը:

ՄԱՍ 3. ՀԱՐԳԱՆՔ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ. ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Չնայած սահմանադրությամբ և օրենքով քաղաքացիներին տրված է խաղաղ եղանակով իշխանությունը փոխելու իրավունք, դիտորդները քննադատել են երկրում կայացած վերջին համապետական ընտրությունների ժամանակ իշխանությունների միջամտությունն այդ իրավունքի իրացման հարցում:

Ընտրություններ և քաղաքական մասնակցություն

Կայացած վերջին ընտրությունները. Դիտորդները քննադատեցին 2008թ. նախագահական ընտրությունները՝ որպես զգալի խախտումներով անցած ընտրություն, որի ընթացքում ըստ հաղորդումների տեղ է գտել հովանավորչական վերաբերմունք իշխանական թեկնածուների նկատմամբ, քվեատուփերի լցոնում, քվեների գնում, բազմակի քվեարկություն, ընտրողների, թեկնածուների և լրատվամիջոցների ահաբեկում քարոզչության փուլում: Ըստ ԵԱՀԿ-ի քվեներն հաշվելիս եղել են թերություններ հաշվետվողականության ու թափանցիկության մասով, իսկ բողոքարկման և գանգատարկման ընթացակարգերը չեն եղել լիովին արդյունավետ: Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ու Հեռուստատեսության ու ռադիոյի ազգային հանձնաժողովը չեն ապահովել, որ բոլոր թեկնածուների համար

լրատվամիջոցները տրամադրեն հավասար խաղի պայմաններ, և կողմնակալությունը լրատվամիջոցներում ակնհայտ էր:

Եղել են շարունակական դժգոհություններ, որ ընդդիմադիր կուսակցությունների համար լրատվամիջոցների հասանելիության սահմանափակ հնարավորություններ են եղել:

Մայիսի 26-ին Ազգային ժողովն ընդունեց նոր ընտրական օրենսգիրքը, որով ներմուծվում են բազմաթիվ բարեփոխումներ, որոնք Վենետիկի հանձնաժողովի և այլ միջազգային դիտորդների կողմից գնահատվում են որպես դրական տեղաշարժ: Այնուհանդերձ, այս բարեփոխումները չեն ցրում մտահոգությունները կապված օրենքի իրականացման, ընտրական հանձնաժողովների կազմի, ինչպես նաև երկրից դուրս բնակվող մոտ 500000-800000 գրանցված ընտրողների հետ կապված կեղծիքի ու չարաշահումների առկա հնարավորության հետ:

<u>Քաղաքական կուսակցություններ</u>. Քաղաքական կուսակցությունների գրանցման կամ գործունեության հետ կապված անհարկի իրավական սահմանափակումների մասին հաղորդումներ չեն եղել: Այնուհանդերձ, եղել են որոշ դժգոհություններ, որ իշխանություններն օգտագործել են վարչական ռեսուրսները, որպեսզի ապախրախուսեն ընդդիմադիր կուսակցություններին ուղղվող հատկացումները՝ այդպիսով սահմանափակելով այդ կուսակցությունների գործունեությունը: Բացի այդ, եղել են պնդումներ, որ աշխատանքի ընդունման որոշումներում իշխանությունները խտրական վերաբերմունք են հանդես բերել ընդդիմադիր քաղաքական կուսակցությունների անդամների հանդեպ:

<u>Կանանց և փոքրամասնությունների մասնակցությունը.</u> Կանանց մասնակցության մակարդակը հասարակական և քաղաքական կյանքում, հատկապես որոշումներ կայացնող մարմիններում, մնացել է ցածր: Տարեվերջի դրությամբ 131 պատգամավոր ունեցող Ազգային ժողովում կար 11 կին, կառավարությունում՝ երկու կին նախարար, իսկ կին մարզպետներ չկային: Երևանի ավագանու 52 ընտրված անդամներից միայն հինգն էին կանայք, իսկ Երևանի 12 վարչական համայնքներից որևէ մեկի ղեկավարը կին չէր:

Փոփոխված ընտրական օրենսգրքով համամասնական ընտրակարգի ներքո կին թեկնածուների ներկայացվածությունը կուսակցական ցուցակներում 15 տոկոսից բարձրացվել է 20 տոկոս: Այնուհանդերձ, նախկինում կին թեկնածուների զգալի մասը ընտրություններից հետո հանեցին իրենց թեկնածությունը, որի արդյունքում Ազգային ժողովի կազմում նրանց ներկայացվածությունն օրենքում նշված համամասնությունից շատ ավելի ցածր էր: Նոր ընտրական օրենսգրքով նաև սահմանվել է նվազագույն սեռային հավասարակշռության պահանջ կենտրոնական ու ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների համար:

ՄԱՍ 4. ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ԿՈՌՈՒՊՑԻԱ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ

Օրենքով պաշտոնեական կոռուպցիայի համար սահմանված են քրեական պատժամիջոցներ. այնուհանդերձ, կառավարությունն օրենքն արդյունավետորեն չի կիրառել: Կոռուպցիան շարունակում էր մնալ որպես լուրջ խնդիր, և պաշտոնյաները հաճախ անպատժելիորեն ներգրավվում էին կոռուպցիոն գործողությունների մեջ, իսկ իշխանությունները ձեռնարկում էին կանխարգելման սահմանափակ միջոցներ: Քաղաքացիական խմբերը, որ աշխատում էին կոռուպցիայի դեմ նշում էին, որ իշխանությունները շարունակում էին անտեսել լրատվամիջոցների հաղորդումները, որոնք ակնարկում էին պետական պաշտոնյաների կոռուպցիոն գործելաոճը:

Իշխանությունները ձեռնարկել են կոռուպցիայի դեմ պայքարի որոշ քայլեր մի շարք պետական կառույցներում ու նախարարություններում: Օրինակ՝ ներդրվեցին վարորդական իրավունքի, անձնագրի, ձեռնարկության գրանցման վերանայված ընթացակարգեր՝ այդ փաստաթղթերի ստացման համար կաշառք տալն ապախրախուսելու նպատակով: Այս քայլերի արդյունքների մասին հաղորդումներ չեն եղել: Տարվա ընթացքում Հատուկ քննչական ծառայությունը քննել է կոռուպցիայի մեղադրանքով 58 գործ: 23 գործեր, որոնցում ներգրավված են 47 հոգի, որից 33-ը պետական պաշտոնյաներ, ուղարկվել են դատարան:

Մայիսի 12-ին Վերահսկիչ պալատը ներկայացրեց 2010թ. զեկույցը, որտեղ նշվում էր, որ Սոցիալական ապահովության պետական ծառայությունը հազարավոր կենսաթոշակներ է վճարել այնպիսի անձանց անունով, ովքեր տարիներ առաջ մահացած են եղել: Զեկույցն առաջ էր քաշում այն ենթադրությունը, որ այս գումարը, որ կազմում էր մոտ 113 միլիոն ՀՀ դրամ (293500 ԱՄՆ դոլար) գրպանվել էր ծառայության պաշտոնյաների կողմից Երևանում: Ծառայության պետը՝ Վազգեն Խաչիկյանը զեկույցի ներկայացումից անմիջապես հետո հեռացվեց պաշտոնից: Դատախազությունը յուրացման փաստով հարուցված քրեական գործը համատեղեց ծառայությունում տեղ գտած այլ խախտումների, մասնավորապես՝ ծառայության տարածքային կենտրոնների կողմից 60 միլիոն ՀՀ դրամ (155,840 ԱՄՆ դոլար) յուրացնելու փաստով հարուցված գործի հետ: Տարեվերջի դրությամբ գործի քննությամբ զբաղվում էր ոստիկանության հատուկ աշխատանքային խումբը: Տարեվերջի դրությամբ Խաչիկյանին մեղադրանք չէր ներկայացվել, չնայած ըստ պաշտոնական տեղեկատվության 24 այլ անձանց արդեն ներկայացվել էր մեղադրանք:

Խնդրահարույց էր մնում կոռուպցիան ոստիկանությունում: Ոստիկանության բարձրաստիճան պաշտոնյաների հետ կապված մի շարք հակակոռուպցիոն գործերից բխում էր, որ պաշտոնեական լիազորությունները չարաշահելու մեջ մեղադրվող պաշտոնյաներն ավելի հաճախ են պատասխանատվության ենթարկվել քան նախորդ տարիներին: Մարտի 24-ին իրավասու մարմինները ձերբակալեցին ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության պետ գեներալ-մայոր Հովհաննես

Թամամյանին՝ պաշտոնական լիազորությունները չարաշահելու համար, որ հանգեցրել է ծանր հետևանքների: Դատախազները մեղադրում էին Թամամյանին 2010թ. մայիսին Երևանում և 2009թ. նոյեմբերին Գավառում տեղի ունեցած սպանությունների քննության ընթացքում ենթադրաբար իր հետ կապեր ունեցող անձանց օգնելու նպատակով միտումնավոր չարաշահումներ թույլ տալու մեջ: Մարտի 15-ին, նախքան Թամամյանի ձերբակալությունը, Նախագահ Սարգսյանը հրավիրեց բարձրաստիճան ոստիկանների արտահերթ նիստ, որի ընթացքում մեղադրեց ոստիկանության ղեկավարությանը կոռուպցիայի ու ոչ կոմպետենտության մեջ՝ մասնավորապես ակնարկելով Թամամյանի դեպքը:

Օգոստոսի 30-ին պաշտոնական դիրքը չարաշահելու, գույքի առավել խոշոր չափերի հասնող հափշտակության և ճանապարհային ոստիկանության ծառայողական ավտոմեքենաների լիցքավորման համար նախատեսված 218 միլիոն ՀՀ դրամ (566230 ԱՄՆ դոլար) արժողությամբ բենզինի յուրացման համար ձերբակալվեց ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Մարգար Օհանյանը: Սեպտեմբերի 1-ից Օհանյանն ազատվեց իր պաշտոնական պարտականությունների կատարումից. մեղադրվող հանցանքների համար նրան սպասում է մինչև ութ տարվա ազատազրկում:

Եկամուտների թափանցիկությունն ապահովող օրենսդրությունը պահանջում է, որ պետական պաշտոնյաները, նրանց ընտանիքի անդամները, ինչպես նաև տարեկան 8 միլիոն ՀՀ դրամը (20780 ԱՄՆ դոլար) գերազանցող եկամուտ ունեցող քաղաքացիները ներկայացնեն եկամուտների տարեկան հայտարարագրեր: Պարզ չէր, թե պետական պաշտոնյաներն ու բարձր եկամուտներ ունեցող քաղաքացիներն ինչքանով էին հետևել օրենքին: Ըստ տեղական դիտորդների հաղորդումների հարկային մարմինները չունեին ներկայացված հայտարարագրերի արժանահավատությունը ստուգելու կարողություններ ու ռեսուրսներ:

Թեև սահմանադրությամբ և օրենքներով արգելվում է ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անձանց պետական պաշտոն զբաղեցնել, սակայն գործարարները շարունակել են տեղեր զբաղեցնել խորհրդարանում, իսկ պետական տարբեր պաշտոնյաներ, ըստ հաղորդումների, շարունակել են օգտագործել իրենց պաշտոններն ի նպաստ իրենց սեփական գործարար շահերի:

Օրենքը սահմանում է պաշտոնական տեղեկատվության հանրային հասանելիությունը: Գործնականում շատ կառույցներ և պաշտոնյաներ չեն կամեցել ապահովել այդ հասանելիությունը: Տարեվերջի դրությամբ կառավարությունը դեռ չէր ընդունել տեղեկատվության հավաքումն ու տրամադրումը կարգավորող իրավական ակտերը, որոնք պահանջվում են և լրացնում են 2003թ. ընդունված Տեղեկատվության ազատության մասին օրենքը: Պաշտոնյաները տեղեկատվության տրամադրումը մերժելիս հողում են կատարել այս ակտերի բացակայությանը: ՀԿ-ները դատարանների միջոցով տեղեկատվություն ստանալու հարցում ավելի հաջողակ են եղել, քան դրանք ուղղակիորեն պետական կառույցներից ստանալու հարցում:

ՄԱՍ 5. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՎՈՂ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մարդու իրավունքների ոլորտի մի շարք տեղական և միջազգային խմբեր ընդհանուր առմամբ գործել են առանց կառավարության սահմանափակումների՝ ազատորեն հետաքննելով և հրապարակելով մարդու իրավունքների դեպքերի վերաբերյալ իրենց եզրակացությունները: Պետական պաշտոնյաները երբեմն արձագանքել են նրանք կարծիքներին և համագործակցել:

Իշխանության իրավասու մարմինները հիմնականում չեն մերժել հանդիպել տեղական հասարակական կազմակերպությունների դիտորդների հետ և հետևել են որոշ հասարակական կազմակերպությունների առաջարկներին, մասնավորապես՝ սոցիալական, կրթական ու տեղական խնդիրներին առնչվող հարցերում: Իրավասու մարմինները, սակայն, սովորաբար չեն արձագանքել ՀԿ-ների հնչեցրած մեղադրանքներին՝ կապված իրավապահ մարմինների կողմից վատ վերաբերմունքի ու չարաշահումների դրսևորումների հետ: Իշխանությունների ընդհանուր արձագանքը նմանատիպ դեպքերում եղել է այն, որ քննություն է իրականացվել ու մեղադրանքները չեն հիմնավորվել:

Իրավասու մարմինների կողմից երբեմն եղել են հետապնդումներ մարդու իրավունքների առանձին խմբերի նկատմամբ: Օրինակ՝ հոկտեմբերին «Բանակն իրականում» նախաձեռնությունը մի քանի իրավապաշտպան ՀԿ-ների հետ միացավ բանակում զոհված զինծառայողների ընտանիքներին, ովքեր կանոնավոր բողոքի ցույցեր էին անում կառավարական նստավայրերի մոտ: Նրանք իրենց բողոքն էին հայտնում մարդու իրավունքների խախտումների ու ոչ մարտական պայմաններում գրանցված մահվան դեպքերի դեմ և պահանջում էին մահվան դեպքերի հետաքննություն: ՀԿ-ների մասնակցությունը բացասական արձագանք գտավ պաշտպանության նախարարության բարձրաստիճան պաշտոնյաների շրջանում: Այդ ընթացքում պաշտպանության փոխնախարար, այնուհետև ոստիկանության պետ Վլադիմիր Գասպարյանը մի շարք հարցազրույցներում նախաձեռնության մասնակից «Հելսինկյան կազմակերպություններին» անվանեց «գրանտակերներ» և «արժանապատվություն ու հայրենասիրություն չունեցող» անձինք: Իր հարցազրույցներում Գասպարյանը մեղադրում էր իրավապաշտպան կազմակերպություններին միջազգային դոնորների պատվերը կատարելու մեջ: Նոյեմբերի 10-ին Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը դատական հայց ներկայացրեց Գասպարյանի դեմ՝ պահանջելով հրապարակային ներողություն խնդրել ցուցարարներից և վճարել 10 դրամ (2 ցենտ) խորհրդանշական փոխհատուցում կազմակերպության բարի համբավին պատճառած վնասի համար: Դեկտեմբերի 6-ին իշխանական Հանրապետական կուսակցության ներկայացուցիչ, պատգամավոր Կարեն Ավագյանն այդ կազմակերպությունների մասին նույնաբովանդակ մեկնաբանություններ արեց Ազգային ժողովում:

Մարդու իրավունքների պաշտպանության պետական կառույցները. Գործում է օմբուդսմենը, ում գործառույթն է պաշտպանել մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները՝ ազգային, մարզային ու տեղական կառավարման մարմինների թույլ տված չարաշահումներից: Ազգային ժողովը մարտի 2-ին նշանակեց նոր օմբուդսմեն:

Շահույթ չհետապնդող կազմակերպությունների գործունեությունը վերահսկող մարմին ստեղծելու մասին 2010թ. օգոստոսին ընդունված որոշումը տարվա ընթացքում ակտիվորեն չի իրագործվել:

ՄԱՍ 6. ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՉԱՐԱՇԱՀՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳ

Սահմանադրությամբ և օրենքներով արգելվում է ռասայի, սեռի, հաշմանդամության, լեզվի կամ սոցիալական կարգավիճակի հիման վրա խտրականությունը: Գործնականում կառավարությունն այդ արգելքներն արդյունավետորեն չի կիրառել:

Կանայք

Բռնաբարություն և ընտանեկան բռնություններ. Բռնաբարությունը քրեական հանցագործություն է, որի համար սահմանված առավելագույն պատժաչափը 15 տարվա ազատազրկումն է: Ամուսնական բռնաբարությունը քրեականացնող առանձին օրենսդրական դրույթներ չկան: Ըստ պաշտոնական վիճակագրության՝ իրավասու մարմինների կողմից տարվա ընթացքում գրանցվել է բռնաբարության և բռնաբարության փորձի 15 դեպք: Այս դեպքերի հետ կապված 8 հոգի դատապարտվել է, իսկ մնացած գործերով քննությունը դեռ ընթացքի մեջ էր: Սոցիալական պիտակավորման պատճառով բռնաբարության նման հանցանքների մասին հաղորդումները շարունակում են շատ քիչ լինել:

Ընտանեկան բռնության դեմ առանձին օրենք չկար: Համոզմունք կա, որ ամուսինների կողմից դաժան վերաբերմունքը և կանանց դեմ բռնությունները լայն տարածում ունեն: Հունվարից հունիս ամիսների ընթացքում Կանանց ռեսուրս կենտրոն կազմակերպությունը թեժ գծով ստացել է 709 հեռախոսազանգ ընտանեկան բռնությունների վերաբերյալ: Մեծամասնությունը (442) վերաբերում էին հոգեբանական բռնությանը, 260-ը՝ ֆիզիկական բռնություններին, իսկ յոթը՝ սեքսուալ բնույթի բռնություններին: Կենտրոնը նաև հայտնել է, որ օժանդակության համար ապաստան դիմած ընտանիքների թիվը տարվա առաջին կեսին նախորդ տարվա համեմատ ավելացել է իննով. Հունվարից հունիս ամիսներին ապաստանը սպասարկել է 25 կնոջ և 27 երեխաների:

Ընտանեկան բռնություն վերապրածների համար ՀԿ-ի կողմից շահագործվող մեկ հիմնական ապաստանից բացի, Երևանի մոտակա գյուղերից մեկում հունիսին բացվեց նոր ժամանակակից մասնավոր հաստատություն: Հաստատությունը

սպասարկում է կարիքավոր ու խոցելի խմբերի կանանց, որոնց շարքում ի թիվս այլոց ընտանեկան բռնություն վերապրածներ են:

Ըստ տեղական դիտորդների ընտանեկան բռնության դեպքերի մեծ մասի վերաբերյալ շարունակում են ոստիկանությանը չհայտնել, որովհետև տուժողները վախենում են ֆիզիկական վնասից, անհանգստանում են, որ ոստիկանությունը նրանց կվերադարձնի իրենց ամուսիններին, կամ ամաչում են ընտանեկան խնդիրներն ի ցույց դնելուց:

Եղել են նաև հաղորդումներ, որ նման դեպքերում ոստիկանությունը դժկամություն է հանդես բերել ու չի խրախուսել կանանց բողոքներ ներկայացնել, հատկապես Երևանից դուրս՝ մարզերում: Ընտանեկան բռնության դեպքերի մեծ մասը եղել են թեթև կամ միջին ծանրության: Նման դեպքերում տուժողը կարող է հրաժարվել մեղադրանք ներկայացնելուց: Ընտանեկան բռնությունների մասին հաղորդող տուժողները հաճախ ճնշումների են ենթարկվել բռնություն գործադրողների կողմից, որպեսզի ետ վերցնեն բողոքը կամ փոխեն իրենց նախկին ցուցմունքը:

Մարտին սկսվեց Յանիս Սարգիսովի դատավարությունը կնոջ՝ Զարուհի Պետրոսյանի մահվան փաստով: Կանանց իրավունքների հարցերով զբաղվող ՀԿ-ների դաշինքն ակտիվորեն հետևում էր գործի ընթացքին, մասնակցում դատական լսումներին և կազմակերպում բողոքի ակցիաներ՝ պահանջելով արդարադատություն: Ըստ Պետրոսյանի քրոջ, Զարուհին ենթարկվել է դաժան վերաբերմունքի թե ամուսնու, թե սկեսրոջ կողմից: Այնուհանդերձ, սկեսրոջ կողմից ոտնձգությունները փաստերով չհիմնավորվեցին, իսկ Նորք-Մարաշ համայնքի Հոգաբարձության ու խնամակալության հանձնաժողովը Պետրոսյանի երկամյա դստեր խնամակալությունը հանձնեց սկեսրոջը: Հոկտեմբերի 24-ին դատարանը Սարգիսովին դատապարտեց 10 տարվա ազատազրկման, ինչ օրենքով սահմանված առավելագույն պատժաչափն է:

Ըստ Ոստիկանության տվյալների տարվա ընթացքում երկրում գրանցվել է ընտանեկան բռնության 528 դեպք, որոնցից 396-ը եղել են ամուսնու կամ զուգընկերոջ կողմից թույլ տված բռնությունները: Մասնավորապես՝ գրանցվել են ծեծի ենթարկելու, դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու, սպառնալիքի և խուլիգանության դեպքեր:

<u>Սեռական ոտնձգություններ</u>. Օրենքը հստակորեն չի արգելում սեռական ոտնձգությունները, չնայած այն անդրադառնում է անառակաբարո գործողություններին և անվայելուչ պահվածքին: Չնայած հրապարակային տվյալներ խնդրի ծավալների վերաբերյալ չկան, սակայն դիտորդները կարծում են, որ աշխատավայրում կանանց հանդեպ սեռական ոտնձգությունները լայն տարածում ունեն:

Վերարտադրողական իրավունքներ. Ըստ օրենքի ամուսնական զույգերը և անհատներն իրավունք ունեն առանց խտրականության, հարկադրանքի կամ բռնության ազատ և պատասխանատու կերպով որոշում կայացնել, թե երբ, ինչ պարբերականությամբ և քանի երեխա են ունենալու, և ունենան միջոցներ և տեղեկատվություն դրա համար: Սակայն գործնականում, հատկապես առավել ավանդական ընտանիքներում այս կարգի որոշումները սովորաբար ընդունվում են ամուսնու և նրա ծնողների կողմից: Հակաբեղմնավորիչների մասին տեղեկացվածությունը և դրանց հասանելիությունը ցածր է, հատկապես գյուղական վայրերում: Մասնագիտական ծննդօգնությունն առավել հասանելի է մեծ քաղաքներում ու բնակելի կենտրոններում:

Խտրականություն. Տղամարդիկ և կանայք ունեն հավասար իրավական կարգավիճակ, սակայն գենդերային և տարիքային խտրականությունը դեռևս խնդրահարույց էին պետական և մասնավոր հատվածներում: Ընդհանուր առմամբ կանայք չեն ունեցել մասնագիտական կամ աշխատավարձային նույն հնարավորությունները, ինչ տղամարդիկ, և հաճախ կատարել են որակավորում չպահանջող կամ ավելի ցածր վարձատրվող աշխատանքներ: Ըստ պաշտոնական վիճակագրական տվյալների 2010թ. կանանց և տղամարդկանց միջին ամսական աշխատավարձի չափերի մեջ եղել է զգալի տարբերություն. նաև երիտասարդ տարիքային խմբերից ավելի բարձր տարիքային խմբերին անցնելիս նշանակալիորեն նվազում է կին աշխատողների միջին ամսական աշխատավարձը: Շարունակում էր ցածր մնալ կանանց ներկայացվածությունը ղեկավար պաշտոններում կառավարության բոլոր օղակներում ու մակարդակներում:

Տարվա ընթացքում հրապարակված հետազոտության տվյալներով ճնշող մեծամասնությունը (71 տոկոս) կին նախագահ ունենալու հանգամանքը համարում էր ոչ ցանկալի, սակայն ավելի մեծ թվով պատասխանողներ ցանկալի էին համարում, որ կանայք առաջնորդող դիրք զբաղեցնեն համայնքային և տեղական մակարդակներում:

Երեխաներ

Ծննդի գրանցում. Քաղաքացիությունը երեխաներին անցնում է ծնողներից: Դիտորդները նշում են, որ որոշ ծնողներ՝ մասնավորապես չքավոր ու սոցիալապես առավել խոցելի խմբերից, հիմնականում ծննդյան գրանցում կատարող կենտրոններ հասնելու հետ կապված տրանսպորտային ծախսերից ելնելով, չեն կարողացել գրանցել երեխայի ծնունդը՝ դրանով իսկ զրկելով նրանց էական սոցիալական ծառայություններից ու առավել մեծացնելով իրենց երեխաների խոցելիությունը: Տարվա ընթացքում իրավիճակը շտկելու հարցում միջազգային դոնորները շարունակել են աշխատել կառավարության հետ:

Դաժան վերաբերմունք երեխաների նկատմամբ. Տարվա ընթացքում «Սեյվ դը չիլդրեն» միջազգային ՀԿ-ի տեղական մասնաճյուղը հրապարակեց Կոտայքի, Արագածոտնի և Շիրակի մարզերում երեխաների հանդեպ ոտնձգությունների մասին ուսումնասիրությունը: Այն նշում էր, որ երեխաները ենթարկվում են ներընտանեկան

ֆիզիկական ու հոգեբանական բռնության և անտեսված են, մասնավորապես՝ համարժեք սնունդ, հագուստ ու կացարան չապահովելու առումով: Երեխաների հաղորդմամբ տնից դուրս նույնպես նրանց նկատմամբ լինում են հոգեբանական ու ֆիզիկական բռնություններ՝ հաստատություններում, դպրոցներում, երբեմն էլ փողոցներում: Ըստ գնահատման որոշ ծնողներ նաև տնտեսապես շահագործում են նրանց՝ ստիպելով, որ աշխատեն: Գնահատումը մատնացույց արեց, որ երեխաները տեղյակ չեն իրենց իրավունքների մասին և անիրազեկության հետևանքով երեխաների դեմ բռնությունը դառնում է սոցիալապես ընդունելի:

Երեխաների սեռական շահագործում. Հակաթրաֆիկինգային հոդվածներով օրենքն արգելում է երեխաների սեռական շահագործումը: Այս հոդվածներով երեխաների թրաֆիկինգի համար սահմանվում է 7-15 տարվա ազատազրկում՝ կախված ծանրացուցիչ հանգամանքներից: Մանկական պոռնկագրությունը պատժվում է առավելագույնը յոթ տարի ազատազրկմամբ:

Ըստ տեղական դիտորդների չի ապահովում անհրաժեշտ իրավական դաշտ երեխաների հետ կապված սեռական բնույթի հանցանքներին համարժեք գնահատական տալու ու դրանց հանդեպ համարժեք քրեական հետապնդում իրականացնելու համար: Սեռական հարաբերությունը 16 տարին չլրացած անձի հետ պատժվում է տույժով և մինչև երկու տարի ազատազրկմամբ: Անչափահասներին սեքսուալ բնույթի առաջարկներ անելը կամ նրանց նկատմամբ կատարված սեքսուալ բնույթի գործողություններ կատարելու մասին չհաղորդելը քրեորեն հետապնդելի չէ: Տարվա ընթացքում իրավասու մարմինների կողմից քրեական հետապնդում է իրականացվել մանկապղծության մեծ հնչեղություն ստացած մի գործով, որը տեղ էր գտել Սյունիքի մարզի Ախթալա քաղաքում: Գործով քննությունը սկսվեց հունվարին այն բանից հետո, երբ եղավ հաղորդում և տեսանյութեր ներկայացվեցին Ազգային անվտանգության ծառայություն: Տեսանյութերում ըստ հաղորդումների վարչապետի նախկին խորհրդական և Ախթալա քաղաքի ամենախոշոր գործատու Սերոբ Տեր-Պողոսյանը սեքսուալ բնույթի գործողություններ էր կատարում մի անչափահաս տղայի հետ: Ըստ հաղորդումների ու ձեռք բերված ապացույցների Սերոբ Տեր-Պողոսյանն աղքատ ընտանիքների անչափահաս տղաներին նկարահանել ու լուսանկարել է, նրանց տվել է գումար և ստիպել կատարել սեքսուալ բնույթի գործողություններ: Նոյեմբերի 17-ին դատարանը սեքսուալ բնույթի բռնի գործողությունների մեղադրանքով Տեր-Պողոսյանին դատապարտեց 15 տարվա ազատազրկման, որն օրենքով սահմանված առավելագույն պատժաչափն էր:

Երեխաների միջազգային առևանգում. Երկիրը միացել է «Երեխաների միջազգային առևանգման քաղաքացիական ասպեկտների մասին» 1980 թ. Հաագայի կոնվենցիային:

Հակասեմականություն

Երկրի հրեա ազգաբնակչությունը կազմում է 500-1000 հոգի: Տարվա ընթացքում հակասեմական բռնությունների մասին հաղորդումներ չեն եղել:

Մարդկանց թրաֆիկինգ

Տես՝ Պետքարտուղարության Մարդկանց թրաֆիկինգի մասին ամենամյա զեկույցը www.state.gov/j/tip էջում:

Հաշմանդամներ

Չնայած օրենքով արգելվում է հաշմանդամություն ունեցող մարդկանց հանդեպ խտրականություն կիրառել աշխատանքում, կրթության, առողջապահության հասանելիության և պետական այլ ծառայությունների տրամադրման գործում, խտրականությունը շարունակում է մնալ խնդրահարույց: Օրենքով և կառավարության հատուկ որոշմամբ պահանջվում է, որ շենքերը, այդ թվում՝ դպրոցները ֆիզիկապես հասանելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար, բայց գործնականում շատ քիչ շենքեր ու հաստատություններ են նրանց համար եղել հասանելի: Հաշմանդամների իրավունքների պաշտպանության պատասխանատվությունը վերապահված է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, որն այն արդյունավետ կերպով չի իրականացնում: Ըստ պաշտոնական վիճակագրության դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշմանդամների թիվը կազմում էր 177076 հոգի:

Չնայած պաշտոնապես գրանցված հաշմանդամների մեծ թվին՝ հաշմանդամ մարդկանց հազվադեպ կարելի է հանդիպել փողոցում՝ հաշմանդամության երևույթի հասարակական պիտակավորման արդյունքում: Որոշ ծայրահեղ դեպքերում այս հասարակական պիտակը դրդում է ընտանիքներին հասարակության աչքից հեռու պահել իրենց հաշմանդամ երեխաներին՝ դրանով իսկ զրկելով նրանց կրթական ու հասարակությանն ինտեգրվելու հնարավորություններից:

Բոլոր տեսակի հաշմանդամություններ ունեցող մարդիկ դժվարություններ են ունենում կյանքի գրեթե բոլոր ոլորտներում, լինի դա բուժօգնությունը, սոցիալ-հոգեբանական վերականգնումը, կրթությունը, տրանսպորտը, հաղորդակցությունը, աշխատանք ունենալը և սոցիալական պաշտպանությունը: Տեղեկատվության ու հաղորդակցության հասանելիության խնդիրն առավել մեծ է տեսալսողական խնդիրներ ունեցողների համար:

Ստանդարտներից ցածր էին նաև ծանր հաշմանդամների համար նախատեսված հիվանդանոցային, տնային խնամքի կամ այլ ինստիտուցիոնալ պայմանները: Ըստ պաշտոնական տվյալների աշխատունակ հաշմանդամների ավելի քան 90 տոկոսն աշխատանք չունի:

Փետրվարին լրատվամիջոցներում հաղորդում եղավ, որ Արտաքին գործերի նախարարության Դիվանագիտական դպրոցը հրաժարվեց քննության առնել Արտակ Բեգլարյանի դիմումը, քանի որ նա կույր էր: Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների բաժնի շրջանավարտ Արտակ Բեգլարյանը բողոք ներկայացրեց վարչական դատարան՝ նշելով որ հանրային ծառայության մեջ ներգրավումը բացառող առողջական խնդիրների շարքում կուրությունը

հիշատակված չէ: Նա մեղադրում էր նախարարությանը խտրականության մեջ: Հոկտեմբերի 10-ին վարչական դատարանը մերժեց Բեգլարյանի հայցը՝ փաստելով, որ Արտաքին գործերի նախարարությունը Դիվանագիտական դպրոցի համար պատասխանատու չէ:

Հելսինկյան ասոցիացիայի 2011թ. զեկույցում կար մի գլուխ, որտեղ ներկայացված էր, թե ինչ պայմաններում են գտնվում նյարդահոգեբանական կլինիկաների պացիենտները: Զեկույցը մատնանշում էր այդ կարգի կլինիկաներում առկա զգալի թերությունները, մասնավորապես վատ սանիտարահիգիենիկ պայմանները, տեղեկատվության ու հաղորդակցության հասանելիության ոչ համարժեք աստիճանը և ոչ համարժեք բուժօգնությունը:

Կոռուպցիոն դրսևորումների ու կամայական որոշումների մասին բազմաթիվ հաղորդումներ են եղել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության ներքո գործող Բժշկասոցիալական փորձաքննության գործակալության վերաբերյալ (ԲՍՓԳ), որը զբաղվում է հաշմանդամության կարգի սահմանմամբ: 2010թ. իր տարեկան զեկույցում օմբուդսմենը նշեց, որ ավելացել են այդ կառույցի կողմից ընդունված որոշումներին առնչվող բողոքները: Քաղաքացիները դժգոհում էին, որ այդ կառույցն իրենց կամայականորեն զրկել է հաշմանդամության կարգից՝ չնայած իրենց առողջության վատթարացմանը:

Սեռական կողմնորոշման ու սեռական ինքնության վրա հիմնված չարաշահումներ, խտրականություն և բռնության դրսևորումներ

Ընդհանուր առմամբ հասարակության վերաբերմունքը ԼԳԲՏ անձանց հանդեպ շարունակում էր մնալ խիստ բացասական և հասարակությունն ընդհանուր առմամբ դիտարկում էր նույնասեռականությունը որպես հիվանդություն: Հասարակության կողմից սեռական կողմնորոշման ու սեռական ինքնության վրա հիմնված խտրականության դրսևորումը բացասաբար է անդրադարձել սեռական փոքրամասնությունների զբաղվածության, ընտանեկան հարաբերությունների, կրթության ու առողջապահական ծառայությունների հասանելիության վրա:

Ակնհայտ գեյ տղամարդիկ ազատվել են զինվորական ծառայությունից՝ ենթադրաբար առաջնորդվելով այն մտահոգություններով, որ նրանք կարող են ենթարկվել դաժան վերաբերմունքի համազորայինների կողմից: Այնուհանդերձ ազատումը հիմնավորվում էր հոգենյարդաբանական հետազոտման բժշկական եզրակացությամբ առ այն, որ անձի մոտ կա հոգեկան խանգարում, և այս մասին նշում էր կատարվում փաստաթղթերում:

Մարդու իրավունքների ակտիվիստները նշում են, որ բանտերում սեռական փոքրամասնությունները հաճախ դառնում են նվաստացուցիչ խտրականության թիրախ, նրանց ստիպում են կատարել նվաստացնող աշխատանքներ և առանձնացնում են մյուս բանտարկյալներից:

Բռնության և խտրականության այլ դրսևորումներ հասարակությունում

Տարվա ընթացքում ՄԻԱՎ/ՁԻԱՀ վարակակիրների հանդեպ հասարակական բռնությունների ու խտրականություն դրսևորումների մասին հաղորդումներ չեն եղել:

Շատ գործատուներ ըստ հաղորդումների խտրականություն են դրսևորում հնարավոր աշխատողների նկատմամբ ըստ տարիքի՝ հաճախակի պահանջելով, որ թափուր տեղերի համար դիմողները լինեն 18-30 տարեկան: Չնայած որ այս խտրականությունը բավական լայն տարածում ուներ, իշխանությունները ոչ մի գործողություն չեն ձեռնարկել այն մեղմելու համար: 40 տարեկանից հետո, աշխատանքը չունեցող աշխատողները, հատկապես՝ կանայք, շատ քիչ հնարավորություն ունեն իրենց կրթությանն ու հմտություններին համարժեք աշխատանք գտնել:

ՄԱՍ 7. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ա) Միավորումներ կազմելու ազատությունը և կոլեկտիվ պայմանագիր կնքելու իրավունքը

Օրենքն աշխատողներին՝ բացառությամբ բանակում ծառայողների և իրավապահ մարմինների աշխատակիցների, անկախ միավորումներ կազմելու և դրանց անդամակցելու իրավունք է վերապահում: Օրենքը նաև սահմանում է գործադուլների իրավունք՝ նույն բացառություններով, և թույլատրում է կոլեկտիվ պայմանագրերի կնքում: Այս գործողությունները կարող են կատարվել առանց իշխանությունների միջամտության: Օրենքը նախատեսում է, որ միություններին անդամակցելու պատճառով աշխատողի իրավունքները չեն կարող սահմանափակվել: Աշխատանքային օրենսգրքում ներկայացվում են այն պատճառները, որոնց հիման վրա աշխատողին կարող են հեռացնել աշխատանքից և այդ շարքում միութենական գործունեությունն ընդգրկված չէ:

Աշխատանքային իրավունքները միշտ չէ, որ հարգվել են գործնականում: Երկրում գործատուների դիմադրության, գործազրկության բարձր մակարդակի և վատ տնտեսական պայմանների պատճառով աշխատավորական կազմակերպությունները մնացել են թույլ: Արհմիությունները հիմնականում պասիվ են եղել, բացառությամբ հանքարդյունահանման ոլորտի արհմիությունների: Միությունները սերտորեն կապված էին իշխանություններին: Հակամիութենական խտրականության դրսևորումների մասին որոշակի հաղորդումներ չեն եղել: Այնուհանդերձ, ըստ հաղորդումների որոշ հանքարդյունահանող ձեռնարկություններ, այդ թվում օտարերկրյա ներդրողների կողմից ֆինանսավորվող, արհեստակցական միություններին աշխատողների միանալը չեն խրախուսել՝ աշխատանքը կորցնելու ակնարկվող սպառնալիքով:

բ) Հարկադիր կամ ստրկական աշխատանքի արգելում

Օրենքով արգելվում է հարկադիր կամ ստրկական աշխատանքը, սակայն եղել են հաղորդումներ, որ եղել են կանանց և աղջիկների աշխատանքային շահագործման

դեպքեր, իսկ շինարարության ոլորտում աշխատանքային շահագործման են ենթարկվել տղամարդիկ: Ոչ մեծ թվով աղջիկներ և տղաներ ենթարկվել են համապատասխանաբար սեռական թրաֆիկինգի և հարկադիր մուրացկանության:

Տես նաև՝ Մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ Պետքարտուղարության ամենամյա զեկույցը www.state.gov/j/tip էջում:

գ) Երեխայի աշխատանքի արգելում և աշխատելու նվազագույն տարիք

Գոյություն ունեն օրենքներ ու կարգեր, որոնք երեխաներին աշխատավայրում պաշտպանում են շահագործումից: Աշխատանքի անցնելու նվազագույն տարիքը 16-ն է, սակայն ծնողի կամ խնամակալի թույլտվությամբ երեխաները կարող են աշխատել 14 տարեկանից: 18 տարին չլրացած անձանց համար արգելվում է արտաժամյա աշխատանքը, աշխատանքը վնասակար, դժվարին ու վտանգավոր պայմաններում, տոն օրերին և գիշերային ժամերին: Երեխաների աշխատանքին վերաբերող օրենսդրության կատարման համար պատասխանատու մարմինները չեն ապահովել օրենքի կիրառումը գործնականում:

Համաձայն դիտորդների՝ շատ երեխաներ, հատկապես գյուղական բնակավայրերում, աշխատել են ընտանեկան ձեռնարկություններում, հիմնականում՝ գյուղատնտեսության ոլորտում: Դիտորդների հաղորդմամբ նրանք նաև նկատել են Երևանում դասերից հետո ծաղիկներ, նկարներ վաճառող ու տեղական շուկաներում աշխատող երեխաներ: Երեխաները նաև աշխատել են առևտրի, շինարարության, մեքենաների սպասարկման ոլորտներում, շահագործել են մեքենաներ, հավաքել են մետաղի ջարդոն և շշեր: Ըստ 2008թ. երեխաների աշխատանքի վերաբերյալ ՄԱԿ-ի երեխաների հիմնադրամի հրապարակած ուսումնասիրության արդյունքների 7-18 տարեկան երեխաների շրջանում վճարովի աշխատանք ունեցողների թիվը կազմել է 4.7 տոկոս: Այս տոկոսային ցուցանիշում ներառված չեն այն երեխաները, ովքեր աշխատում են ընտանեկան գյուղացիական տնտեսություններում կամ բիզնեսներում: Ուսումնասիրությունը նաև պարզել է, որ աշխատող երեխաների գրեթե մեկ երրորդն օրինական աշխատանքային տարիքից ցածր տարիք է ունեցել, գրեթե բոլորն աշխատել են առանց օրինական պայմանագրերի, իսկ որոշ երեխաներ ծանր ֆիզիկական աշխատանք են կատարել՝ որպես բանվորներ ու բեռնակիրներ:

Տես նաև ԱՄՆ աշխատանքի դեպարտամենտի *Մանկական աշխատանքի վատթարագույն ձևերի մասին բացահայտումները* www.dol.gov/ilab/programs/ocft/tda.htm" էջում:

դ) Աշխատանքի ընդունելի պայմաններ

Ամսական նվազագույն աշխատավարձը կազմել է 32500 դրամ (84.41 ԱՄՆ դոլար), որը մոտավորապես հավասար է աղքատության շեմին:

Օրենքով աշխատանքային շաբաթվա տևողությունը 40 ժամ է և սահմանված է տարեկան 28 օր պարտադիր արձակուրդ, ինչպես նաև փոխհատուցում արտաժամյա

և գիշերային աշխատանքի դիմաց: Օրենքով նաև սահմանվում է, որ պարտադիր արտաժամյա աշխատանքը երկու հաջորդական օրվա ընթացքում չի կարող գերազանցել 4 ժամը, իսկ տարվա ընթացքում՝ 180 ժամը: Գործնականում պետական մարմինների կողմից այս ստանդարտների կիրառումն արդյունավետորեն չի ապահովվել: Մասնավոր ոլորտի շատ աշխատողներ չեն կարողացել օգտվել վճարովի արձակուրդից ու նրանցից պահանջվել է աշխատել օրական 8 ժամից շատ ավել՝ առանց վարձատրության: Ըստ որոշ զբաղվածության գործակալությունների ներկայացուցիչների շատ գործատուներ շարունակել են աշխատողներ ընդունել 10-30 օր «փորձաշրջանով», որի ընթացքում նրանք չեն վճարվել: Այնուհետև հաճախ այս աշխատողներին արձակել են, բայց քանի որ այս նախնական աշխատանքն օրինականորեն ձևակերպված չէր, նրանք չեն կարողացել պահանջել աշխատած օրերի վճարը:

Աշխատանքային անվտանգության ու առողջության պահպանման ստանդարտները սահմանվել են կառավարության որոշմամբ: Աշխատանքի պետական տեսչությունը՝ իր 140 տեսուչներով, պատասխանատու է այս ստանդարտների կիրառումն ապահովելու համար, սակայն դա արդյունավետորեն չի անում: Տարվա ընթացքում ըստ հաղորդումների Աշխատանքի պետական տեսչությունը քիչ առաջընթաց է ունեցել տեսչական ռեժիմի կամ աշխատանքային օրենսգրքի կիրառման ապահովմանն ուղղված աշխատանքներում, իսկ կոռուպցիան խարխլել է տեսչության աշխատանքը: Որոշ աղքատ բնակավայրերում հիմնական գործատու հանդիսացող ձեռնարկությունների կառավարիչները հաճախ օգտվում էին այլ աշխատանք չլինելու հանգամանքից և անտեսում էին համարժեք վարձատրության, աշխատանքի անվտանգ պայմանների ապահովման հարցերը և բնապահպանական մտահոգությունները: Ստվերային աշխատողները զրկված էին պետական պաշտպանության որևէ ձևից:

Շատ ոլորտներում աշխատավայրի անվտանգության ու առողջապահական պայմանները շարունակել են չհամապատասխանել ստանդարտներին և տարվա ընթացքում գրանցվել է մահացու ելքով մեկ աշխատանքային պատահար: